№ 52 ՇԱԲԱԹ, 9 ՄԱՐՏԻ

1913
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 9 ՄԱՐՏԻ № 52

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—58.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.
Տպարանի տելեֆոն № 67.

Աղէքսանդր Ստեփանեանը (Սանդրօ) խորին վշտով յայտնում է ազգականներին և ծանօթներին իր սիրելի մօր՝

ՄԱՐԻԱՄ ՍՏԵՓԱՆԵԱՆԻ

մահը, որ տեղի ունեցաւ մարտի 8-ին երկարատև և ծանր հիւանդութիւնից յետոյ: Ամփոփն այսօր, երեկոյեան ժամը 7-ին հանգուցեալի բնակարանում (Շէլկովնիկովսկայա փող. № 7): Մարմնի յուղարկաւորութիւնը վաղը, կիրակի, մարտի 10-ին, առաւօտեան ժամը 10-ին, բնակարանից դէպի Մէյդանի ս. Գէորգ եկեղեցին: Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը: 185. 2—1

Շողակաթ Մահտեսի-Թաղէոսեան Բոստանջեանն իր զաւակներով ու հարսով յայտնում են խորին վշտով ազգականներին ու ծանօթներին անմոռանալի ամուսնու, հօր և սկեսրայրի՝

Ալէքսանդր Նահապետեան ԲՈՍՏԱՆՋԵԱՆԻ

մահը, որ տեղի ունեցաւ մարտի 6-ին, առ. ժամը 10½-ին, երկարատև և ծանր հիւանդութիւնից յետոյ: Մարմնի յուղարկաւորութիւնը այսօր, շաբաթ, մարտի 9-ին, առաւօտեան ժամը 10-ին բնակարանից (Ելիզավետինսկայա № 212) դէպի Կուկիայի Նորաշէն ս. Աստուածածին եկեղեցին (Վօրօնցօվի արձանին մօտիկ): Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը: 183. 2—2

Ղազարոս և Վաղարշակ Նահապետեան և Հերիքնազ ու Վերգինէ Բոստանջեանները իրանց զաւակներով խորին կսկիծով յայտնում են ազգականներին ու ծանօթներին իրանց թանգագին եղբօր, տագրի և հօրեղբօր՝

Ալէքսանդր Նահապետեան ԲՈՍՏԱՆՋԵԱՆԻ

մահը, որ տեղի ունեցաւ մարտի 6-ին, առ. ժամը 10½-ին, երկարատև և ծանր հիւանդութիւնից յետոյ: Մարմնի յուղարկաւորութիւնը այսօր, շաբաթ, մարտի 9-ին, առաւօտեան ժամը 10-ին բնակարանից (Ելիզավէտինսկայա № 212) դէպի Կուկիայի Նորաշէն ս. Աստուածածին եկեղեցին (Վօրօնցօվի արձանին մօտիկ): Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը: 184. 2—2

ՇՈՒՇԻ—ԵւԼԱԽ ՊՈՍՏԱՅԻՆ ՏՐԱԿՏԸ

նորից անցաւ Լ. ՎԱՐԱԶԵԱՆԻ կարգադրութեան տակը: Ձեռք են առնված խիստ միջոցներ՝ կատարել երթեւեկութիւնը առանց ուշացնելու կայարաններում: Ծառայողների կազմը նորոգված է քաղաքավարի և կարգապահ մարդկանցով: Պատրաստված են կայարաններում հանգստանալու և ճաշելու համար մաքուր և յարմար սենեակներ, իսկ Եւլախ, Աղդամ, Խօջալու կայարաններում գիշերել ցանկացողների համար պատրաստված են ձրի և կահաւորված տաք սենեակներ:

Փակ կառքեր, ամեն տեսակ բաց կօլեասկաների և դիլիժանսների համար, նաև առանձին տեղերի համար դիլիժանսներում, պատուէրները ընդունվում են նամակներով և հեռագիրներով օր առաջ և պատրաստ տրվում են կառքերը գնացքները վօկզալ հասած րոպէին: Առանձին տեղի գինը մի մարդու համար դիլիժանսում, առ այժմ, Շուշում 3 ր., Եւլախում 4 ր.: Հասցէն՝ Евлахъ, Контора почтовой станціи.

(օ. մ.) առ. 179. 15—2

ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊ. ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵԿՑԻԱՅԻ ՀՐԱՒԷՐՈՎ

ԳԱՍՏՐՈԼՆԵՐ

ԲԱԳՈՒԻ ՀԱՅ ԴԵՐԱՍԱՆԱԿԱՆ ԽՄԲԻ
Ղեկավարութեամբ ԶԱՐԻՖԵԱՆԻ

Այսօր, շաբաթ, մարտի 9-ին
Առաջին անգամ հայերէն լեզուով
Թիֆլիսի բեմի վրա
ՊԱԴՈՒԱՅԻ ԴՔՍՈՒՀԻՆ
Դրամա 5 գործ., Օսկար Ուայլդի, Թարգմ. Արծիւի:

Երկուշաբթի, մարտի 11-ին
Երկրորդ անգամ
Մասնակցութեամբ տիկ. ՄԱՑՍՈՒՐԵԱՆԻ
ՀԻՆ ԱՍՏՈՒԱԾՆԵՐ
Դրամա 4 գործ. 12 պատկերով, Լ. Շանթի:
Սեփական դեկորներ և հագուստներ: Երգեցիկ խումբ և երաժշտութիւն, յատկապէս այդ պիէսի համար հեղինակած:

Երեքշաբթի, մարտի 12-ին
ՀԱՄԼԵՏ
Ողբերգ. 5 արար. և 12 պատկ., Շէքսպիրի, Թարգմ. Յ. Խան-Մասէհեանի:
Համլէտի դերը առաջին անգամ Թիֆլիսում կը կատարէ պ. ԶԱՐԻՖԵԱՆԸ:
ԽՄԲԻ ԿԱԶՄԸ. տ. տ. Ադամեան, Ագնիւ, Արաքս, Աստղիկ, Մելիք-Շահնազար. պ. պ. Ահարոնեան, Անդրանիկ, Ալլահվերդեան, Աւալեան, Զարիֆեան, Շահխաթունի, Միրզոյեան, Ռշտունի, Խաժակ, Սափարեան, Ստեփանեան և սեկցիայի սիրողները:
Ռեժիսեօրական խորհուրդ
Յուշարար՝ Թորոսեան
Տոմսակները վաճառվում են թատրօնի կասսայում:
ՏԵՂԵՐԻ ԳՆԵՐԸ ՍՈՎՈՐԱԿԱՆ ԵՆ:
Սկիզբն է երեկոյեան ժամը 8-ին.
187. 2—1

ԲԵՐԼԻՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
Ներքին հիւանդութիւններ՝ առանձնապէս կրծքի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի: Բժշկութիւն նաև ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, ՌԱԴԻՒ պրէպարատներով և վիբրաժական միջոցով՝ ՊՆԷՎՄՕՏՕՐԱԿՍՈՎ:
Ընդունելութիւնը ամեն օր, առաւօտեան ժամը 9—1-ը և երեկոյեան ժամը 5—8-ը:
Չքաւորներին առ. ժամը 9—10-ը ձրիաբար:
Սօլօլակ, Բէհբութեան փող. № 23 (անկիւն Գանովսկայա): Հեռախօս 7—92.
(ա. օ.) առ. 92. 100—25

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Գ. Յ. ԳԱՐԱԿԻԼԵԱՆ
(Նախկին օգնական Կամսյեվի)
Վերադառնալով արտասահմանից վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը
Ամեն օր՝ առաւօտեան ժ. 9—1½-ը և երեկ. ժ. 4—7-ը:
Վելեամինօվսկայա փողոց № 4, բն. 3.
առ. (օ. մ.) 129. 50—16

ՓՈԽԱՐՔԱՅԻ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Լոյս մարտի 8-ի գիշերը Նորին Պայծառափայլութիւնը քիչ քնեց: Զարկերակը 54—66 էր մի րոպէում. շնչառութիւնը 26—32 մի րոպէում, ժամանակ առ ժամանակ կապվում է: Թուլութիւնը դեռ չէ անցնում: Բիւլլետէնը ստորագրել են բժիշկներ Ադամեան, Բուդէնկօ, Շէվչէնկօ:

—

Մարտի 7-ին Թիֆլիսի մահմեդականների մզկիթում մահմեդական կանանց և տղամարդկանց բարեգործական ընկերութիւնների նախաձեռնութեամբ, ամբողջ մահմեդական հոգևորականութեան մասնակցութեամբ, կատարվեց հանդիսաւոր մաղթանք փոխարքայի շուտափոյթ առողջութեան համար:

Երէկ Զուբալովեան Ժողովրդական Տանը կատարվեց մաղթանք քաղաքի հաշւով պահվող բոլոր դպրոցների սաների ներկայութեամբ:

—

Կովկասի զանազան քաղաքներում կատարվում են մաղթանքներ փոխարքայի առողջութեան համար:

ՅՈՒՆԱՑ ԹԱԳԱՒՈՐԻ ՍՊԱՆՈՒՄԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

7 մարտի

Պետերբուրգ.—Բարձրագոյն Պալատում սուգ նշանակվեց վեց շաբաթով հելլէնների թագաւորի մահվան առիթով:

Յունական եկեղեցում պատարագ մատուցվեց հելլէնների թագաւորի համար: Պատարագիչն էր Անտիոքի պատրիարքը: Ներկայ էին Մեծ Իշխանուհի Մարիա Պաւլօվնան՝ Օգոստափառ Թոռների, յունաց գահաժառանգ Նիկօլայի դուստրների հետ, Մեծ Իշխանուհիները և Իշխանները, պալատի և արտաքին գործերի մինիստրները:

—

Վիէննա.—Բերխտօլդը այցելեց յունաց դեսպանին և ցաւակցութիւն յայտնեց կայսրի կողմից:

—

Լօնդօն. — Ասկվիտը համայնքների պալատի կողմից ցաւակցութիւն յայտնեց թագաւորի սպանութեան առիթով:

—

Լօնդօն.—Համայնքների պալատը որոշեց ցաւակցութիւն յայտնել անգլիական թագաւորական զոյգին, հելլէնների թագաւորին, յունաց կառավարութեանը և ժողովրդին:

—

Բերլին.—Լանդտագի նախագահը անձամբ յունաց հաւատարմատարին յայտնեց լանդտագի ցաւակցութիւնը թագաւորի սպանութեան առիթով:

—

Աթէնք. — Կօնստանդին թագաւորը դիմեց զօրքին մի հեռագրով, որի մէջ ասված է. «Զագիր սպանութիւնը խլեց մեզանից մեր առաջնորդին մեր և ազգի համար կրիտիկական օրերին: Ես իմ ամբողջ կեանքը նուիրել եմ զօրքին, որի հետ ինձ միացնում են թէ բաղդաւոր ու թէ անբաղդ պատերազմները»:

Վենիզէլօսը թագաւորի մասին ճառ արտասանեց պալատում: Օպպօզիցիայի լիդէրը գովաբանեց հանգուցեալին: Պալատը որոշեց յայտարարել սուգ վեց ամսով ու արձան կանգնեցնել թագաւորին:

—

Սօֆիա.—Ֆերդինանդ թագաւորը հեռագրով խորին ցաւակցութիւն յայտնեց թագաւորին, այրիացած թագուհուն և Վենիզէլօսին: Պալատում հաստատվեց 15 օրով սուգ: Ազգային ժողովը իր համակրանքը արտայայտեց հաւատակից դաշնակից ազգին և փակվեց ի նշան սգի:

—

Աթէնք. — Կօնստանդին թագաւորը եկաւ Եանինա:

Որքան պարզված է, ոճրագործը գործակիցներ չէ ունեցել:

—

Բէլգրադ. — Տաճարում պատարագ մատուցվեց հելլէնների թագաւորի համար, որին ներկայ էին Պետր թագաւորի ներկայացուցիչները, Պաշիչը կառավարութեան բոլոր անդամների հետ և դիպլօմատիական մարմինը:

—

Պիրէյ.—Թագաւորը սպասվում է վաղը:

Մարմնի անդամահատութիւնից յետոյ երևաց, որ գնդակը մտել էր սիրտը ու թոքերը: Մահը վայրկենական էր: Մարդասպանը յայտնեց, որ նա անիշխանական է: Այս յայտարարութիւնը ճշգվում է նրա մօտ գտնված մի բացիկով, որի մէջ յարձակումներ են պարունակվում հասարակական կազմի վրա և որի մէջ ասված է, թէ նա վճռել է ինքնասպանութիւն գործել, նախօրօք սպանելով թագաւորին:

—

Բուխարէստ.—Թագաւորը, մինիստրները և դիպլօմատիական մարմնի ներկայացուցիչները յունաց դեսպանին ցաւակցութիւն յայտնեցին:

Սալօնիկ.—Մահափորձից քիչ առաջ թագաւորը ասել էր ադիւտանտին. «Դանիական գրողներից մինը իմ կենսագրութիւնն է կազմում. Նա ըստ հարկի մի գեղեցիկ էջ է նուիրելու դէպի Մակեդոնիա ձեռնարկված յունական արշաւանքի և իմ այստեղ լինելու մասին»:

Այրիացած թագուհին այսօր տեղս կը հասնի ռուսական շոգենաւով:

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

7 մարտի

Պետերբուրգ.—Ցարսկոյէ Սելօյի Ալէքսանդրեան պալատում Թագաւոր Կայսրը և Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդօրօվնան բարեհաճեցին ընդունել Անտիոքի պատրիարքին և Տրիպօլիսի միտրօպօլիտին: Բարձրագոյն ունկնդրութիւնը տևեց կէս ժամից աւելի: Բարձրագոյն պալատի կողմից տրվեց նախաճաշ: Պատրիարքին Բարձրագոյնս շնորհվեց գոհարազարդ խաչ:

—

Պետերբուրգ.—Միացեալ ազնուական ընկերութիւնների համագումարը քննեց խորհրդի մասնաժողովի զեկուցումը մամուլի հարցի մասին: Մասնաժողովի կարծիքով անհրաժեշտ է ստեղծել մամուլի համար այնպիսի պայմաններ, որոնք ապահովեն Գահի բարձունքից ազդարարված խօսքի ազատութիւնը, հիմնված օրէնքի ճշգրիտ ցուցումների վրա: Սակայն խօսքի ազատութիւնը անսահման մտքով չը պէտք է հասկացվի: Ամեն մի կազմ պետութեան մէջ չէ կարող չը պաշտպանել առանձին քաղաքացիների օրինական շահերը, կրօնը, հասարակական բարոյականութիւնը և այլն: Մասնաժողովը կողմնակից է գրաքննիչ ատեանի գործունէութեան շարունակութեանը:

—

Պարիզ.—Քաղաքական գործիչները, որոնց հետ խորհրդակցեց Պուանկարէն, համաձայնեցին Պուանկարէի այն կարծիքի հետ, թէ նոր կաբինէտը պէտք է աշխատէ հաշտեցնել երկու պալատների հանրապետական տարրերը:

Պուանկարէն յանձնեց Լուի Բարթուին կաբինետ կազմել:

—

Վիէննա.—Երկու խումբ ռազմանաւ մեկնեց Պօլից դէպի հարաւ, ըստ պաշտօնական հաղորդագրութեան՝ փորձնական վարժութիւնների համար:

—

Մադրիդ.—Պահպանողական կուսակցութեան պարագլուխ ընտրվեց Էդուարդ Դատօն:

—

Նիւ-Եօրկ.— Ամերիկական բանկերի միութիւնը չինական փոխառութեան հարցում հրաժարվեց բանակցութիւնները շարունակելուց:

—

Պեկին.—Երկու պալատների նստաշրջանների բացումը նշանակված է ապրիլի 8-ին:

—

Տօկիօ.—Վերին պալատում արտաքին քաղաքականութեան ու ծովային ույժերը մեծացնելու մասին ուղղված հարցապնդումներին մինիստրները պատասխանեցին դռնփակ նիստում:

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՏԱԳՆԱՊԸ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

7 մարտի

Սօֆիա.—Թիւրքերը Չաթալջայի մօտ նորից փորձեցին յարձակման դիմել: Բօլգարները թիւրքերին փախուստի դարձրին, պատճառելով նրանց խոշոր կորուստներ:

Ադրիանուպօլսի և Բուլաիրի մօտ հանգիստ է:

—

Լօնդօն.—Առ այժմ պաշտօնական հեռագիր չը կայ աւստրիական նաւատորմերի շարժումների ու նպատակների մասին, ինչպէս և այն ուլտիմատական բնաւորութեան պահանջների մասին, որ իբր թէ ներկայացրել է Աւստրիան Չերնոգորիային: Քաղաքական շրջանները հակված չեն հաւատալու Աւստրիայի անակնկալ ագրեսիվ մտադրութեանը: Յամենայն դէպս եթէ Աւստրիան հանդէս գայ ակտիվ կերպով, այդ կը լինի սոսկ եզակի քայլ Աւստրո-Ունգարիայի կողմից և ոչ մի առնչութիւն չէ կարող ունենալ եւրօպական համերգի հետ:

—

Վիէննա.—Լրագիրները պաշտօնական օրգանների հետ կատաղի արշաւանք են սկսել Չերնոգօրիայի և մասամբ Սերբիայի դէմ՝ Սկիւտարի ռմբակոծութեան ժամանակ տեղի ունեցած անմարդասէր գործելակերպի և «Սկօդրա» շոգենաւի հետ պատահած միջադէպի առիթով: Լրագիրները չերնոգօրցիների գործողութիւններն անուանում են միջազգային իրաւունքի աղաղակող խախտումն:

«Ֆրեմդէնբլատը» հաղորդում է, որ Ցետինիէի աւստրո-ունգարական հաւատարմատարին յանձնարարված է առաջադրութիւն անել չերնոգօրական կառավարութեանը Դիակօվայում և Սան-Ջիօվանի-դի-Մեդուայում տեղի ունեցած դէպքերի ու Սկիւտարի ռմբակոծութեան առիթով:

—

Կ. Պօլիս.—Օսմանեան կառավարութիւնը տեղեկացնում է, որ կօնտրաբանդ կը համարէ ամեն տեսակ ուտեստեղէն ու անասունների կեր, որոնք կարող են դատարկվել նաւերից Չաթալջայի ամրութիւնների շրջանում՝ բալկանեան դաշնակից պետութիւնների զօրքերի պէտքերի համար:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

«Թասֆիրի Էֆքեար» թիւրք թերթը հաղորդում է, որ վերջին պատերազմի շնորհիւ առաջ եկած թիւրք գաղթականութեանը տեղ կը տրվի Թիւրքաց Հայաստանում, քանի որ, ասում է թերթը, «տեղական հայ բնակչութիւնը անկարող է հանդիսանում մշակել մեծ տարածութեամբ ազատ մնացած հողերը»: Սա արդեօք ցինիզմ չէ:

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ԹԻՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Վան, 18 փետրվարի

Հակառակ մայրաքաղաքում մինիստրների ժողովի մշակած բարենորոգչական ծրագիրների, որոնք պիտի գործադրվեն Հայաստանում և Սիրիայում, գաւառներում ոչ մի բան դեռ չէ փոխվել, որ ցոյց տալիս լինէր, թէ արդարև անկեղծ ջանքեր են լինում երկիրը բարեկարգելու և մանաւանդ ժողովուրդների միջև ուղիղ հասկացողութիւն և միութիւն առաջ բերելու՝ երկրի ճշմարիտ շահերի շուրջը: Գրել եմ արդէն, որ Կադեր ու Ջաֆհէր աւազակների դատավարութիւնը փոխադրել են Բաղէշ, որպէսզի հեշտ լինի նրանց արդարացնել, իսկ մի քանի օրերից ի վեր յամառ լուրեր են շրջում, թէ աւազակ Սայիդին էլ ներումն է շնորհվել, այն Սայիդին, որ երեք տարվայ ընթացքում 20-ից աւելի զինուորներ սպանեց ու ամբողջ Վասպուրականը իր ոճրագործութիւնների, կողոպուտների թատր դարձրեց: Եւ դեռ սպասվում է, որ նոյնպիսի ներումն շնորհվի աւազակ Միր-Մհէին, Մահմէին. չէ որ վալի Իզզէթ-բէյի տակտիկան եղել է սիրաշահել քիւրդերին և մեղմ միջոցներով վարժեցնել նրանց խաղաղ կեանքի ու աշխատութեան: Իսկ Սայիդ բէյ ու նմանները խաղաղ կեանք ու աշխատութիւն ըմբռնում են այն, որ հայերը առանց ոևէ տրտունջ ու դժգոհութիւն յայտնելու ծառայեն իրանց, իրանց արտը մշակեն, խոտ ու հունձը քաղեն, մինչև իսկ աղայի տան ամենահասարակ ծառայութիւնները կատարեն ոչ միայն ձրի, այլ նոյն իսկ իրանց սեփական գործերից առաջ, որովհետեւ չէ՞ որ աղան կամ բէյը յարգելի, իսկ շէյխերը նոյն իսկ գերբնական անձնաւորութիւններ են, ուստի և նրանք չեն կարող կատարել այն հասարակ ծառայութիւնները, որ կատարում է հասարակ մահկանացուն, րայան։ Ընդոստացումը այս կարգերի դէմ՝ համանիշ է ապստամբութեան ընդդէմ պետութեան, ուրեմն և արժանի պատժի։ Թիւրք և մանաւանդ Իզզէթ-բէյի նման քիւրդ միւթէկալլիբէները, իրանք եւս սովորած լինելով տեսնել հայը միշտ նոյն ստրկական ու ծառայական դերում ու չունենալով բարձր կրթութիւն ու զարգացում, անկարող են փոխել տիրող մտայնութիւն ու սովորական դարձած կարգերը. և որովհետեւ հայերը վերջին տարիները, մանաւանդ Կովկասում և Ամերիկայում ապրելով, շփումն են ունեցել քաղաքակիրթ կեանքի հետ, չեն կարող այլ եւս լուռ համակերպութեամբ տանել բէյի կամ աղայի պահանջը, ինչպէս տարել են իրանց հայրերը, ուստի համարվում են ըմբոստներ, խըյանէթներ և այլն։

Ահա այս մտայնութիւնն է, որը պէտք է փոխել. և նա չէ փոխվում, քանի որ հայերը իրանց դպրոցներով, լուսաւորեալ երկիրներ ու կեանքեր տեսնելով՝ շատ առաջ են անցել, իսկ քիւրդերն ու թիւրքերը մնացել են այն տեղում, ուր գտնվում էին իրանց նախնիք թէկուզ հարիւր տարի առաջ։ Իզզէթ բէյի շատագովված սիրտշահող, հաշտարար քաղաքականութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ վերադարձ դէպի նախկին կարգերը, դէպի ետ, դէպի խաւար։ Իսկ ինչ որ մեզ ամենից աւելի յուսահատեցնում է, այն է, որ ապագայի վրա էլ չենք կարող յոյս դնել, որովհետեւ եթէ առաջադիմութիւնը, զարգացումը պիտի լինեն դպրոցներով, մեր հարեան ժողովուրդները կամ բնաւ չունեն դպրոցներ, և կամ եթէ ունեն, դրանք էլ մէդրէսէների կրթութիւն միայն տալիս են, Ղուրանի խրթնաբանութիւններով ու անիմանալի ընթերցումներով։

Տեսէք թէ ուր է հասնում թիւրք կառավարողների սոսկալի մտայնութիւնը. երբ մի որեւէ թիւրք պաշտօնեայ զեղծում է գործում, մեղանչում է իր պաշտօնավարութեան ժամանակ, անկարելի է նրան պատժել կամ նոյն իսկ պաշտօնանկ անել, այն մտօրումով, թէ մեղք է, չէ որ նա էլ ընտանիք պիտի պահէ. այլ շատ շատ՝ նրան հեռացնում են մի ուրիշ տեղ՝ շարունակելու իր պաշտօնը։ Ադանայի նահանգում հինգ թիւրք ոստիկաններ սոսկալի զեղծումներ են գործում, ինչպէս արբեցութիւն, անառակութիւն և այլն. կառավարութիւնը նրանց քանիցս թեթեւ պատիժներ տալուց յետոյ երբ տեսնում է, որ չեն ուղղվում, իբրեւ պատիժ փոխադրում է նրանց Վանի ու Բաղէշի նահանգները. և այս կարգադրութիւնն էլ անշուշտ ի ձայն փողի յայտարարվում է որպէս բարեկարգութիւն. իսկ ամենից զարմանալին այն է, որ նրանց այս ախրագործութիւնները և տեղափոխութեան պատճառն էլ յայտնում է նահանգիս կառավարութեան և ոստիկանութեան ուղղած մի պաշտօնագրով, որի մէջ գրված են հետեւեալ տողերը.

«Իսկ էնշէի կոմիսար Ալի-Րիզա, Ահմէդ-Նուրի, Դելավէր, Իբրահիմ և Աբդիւլ-Կադրի էֆէնդիներն էլ ժողովրդի մէջ ճանաչված են իբրեւ կաշառակեր և զեղծարար. սրանից զատ՝ արբեցող և քաղանիքների մէջ ժամանակ անցկացնողներ, ուստի նրանց այնտեղ (Ադանա) պաշտօնավարելն այլեւս յարմար չը համարելով, իբրեւ պատիժ իրանց պաշտօններով պիտի փոխադրվեն Վան և Բիթլիս, իբրեւ խրատ և այլոց օրինակ լինելու համար»։

Հիմնալի բարեկարգութիւն, որը թիւրք կառավարութիւնը միայն գիտէ գործադրել։

Մշակ

ԹՈՒՐՔԱՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ինչպէս գիտենք, «Бирж. Вѣд.» թերթը մի յատուկ թղթակից է ուղարկել Հայաստան (պ. Օլգենինին)։ Այժմ պ. Օլգենինի թղթակցութիւններն արդէն սկսել են տպվել թերթի մէջ։ Առաջինը, գրված Դիադինից, կրում է «Քիւրդերի մէջ» վերնագիրը։

Բայազիդից մինչև Դիադին գնալու համար Օլգենինը գործ է դրել 5 օր։ Առաջին օրը նա գիշերում է մի փոքրիկ քիւրդական գիւղում Գըլ-Դիզէ անունով, որտեղ հայոց մի հին գերեզմանատուն ցոյց է տալիս, որ այդ գիւղը մի ժամանակ հայկական է եղել, իսկ այժմ համակ քիւրդաբնակ է։ Միակ հայը, որին նա հանդիպել է այդտեղ, տեղական մաքսային ուղեկալի պաշտօնեան էր, որ գիշերը, ուշ ժամանակ, վախվխելով և անհամարձակ այցելում է թղթակցին, ներողութիւն խնդրում, որ իր մօտ չէ հրաւիրել, որովհետեւ «եթէ ես ձեզ հրաւիրէի, հաւատացէք ինձ, ինձ կը սպանէին»։ Ապա հայ պաշտօնեան պատմում է հետեւեալը. «Քիւրդերի մէջ սաստիկ գրգռումն է թագաւորում. նրանք բոլորովին բաց ասում են քրիստոնեաներին, թէ սպասում են մի ամենափոքր նշանի, որպէս զի վերջացնեն քրիստոնեաներին։ Թող յետոյ գան այստեղ ռուս կօզակները. նրանք այդտեղ կը գտնեն միայն մուսուլմաններ»։ Հայ պաշտօնեան պատմում է, որ Բայազիդի շրջանում հայերի թիւը 20—25,000 է, որոնք ցիրուցան սփռված են քիւրդական ծովի մէջ (125,000). մասնաւոր որեւէ դիմադրութեան մասին այդպիսի պայմաններում, անհնարին է, և ահա քիւրդերը, չը բաւականանալով սովորական կեղեքումներով, վերջերս սկսել են առեւանգել մեր աղջիկներից և կանանց։ Ի՞նչ կարող ենք անել։ Գանգատվե՞լ։ Բայց օսմ. վարչութիւնը ոչ միայն ոչ մի բանի չէ ձեռնարկում քիւրդերին զսպելու համար, այլ, ընդհակառակը, ամեն բան անում է նրանց մոլեռանդութիւնը գրգռելու համար։

Յայտնվում է հայ պաշտօնեայի պատմածներից, որ թիւրքաց կառավարութեան կարգադրութեամբ բացված մէդրէսէներում քարոզվում է բոլորովին ազատօրէն «հակաքրիստոնէական» կամ «հակահայկական» պրօպագանդա։ Ի վերջոյ, հայ պաշտօնեան խորհուրդ է տալիս Օլգենինին՝ գնալ այցելել տեղական քիւրդ աշիրէթի շէյխին, որ Հիւսիսային Քիւրդստանում ամենազօրաւորն է և որ 120,000 քիւրդերից բաղկացած «Ագէմանլի» աշիրէթի պետն է, Ալի-բէյ անունով։

Եւ ահա ինչպէս է նկարագրում ռուս թղթակիցը այդ հզօր քիւրդ շէյխին։ Նա հագնված է կեղտոտ, նրա ամրոցը շրջապատված է աղբով։ Նա ասում է թղթակցին հետեւեալը, որ ցոյց է տալիս ամբողջովին նրա հոգեբանութիւնը.

«Մեր ամբողջ գլուխը, մեր սիրտը և մեր էութիւնը լցված են շարիաթով։ Ուրիշ օրէնք մենք չենք ճանաչում և մեր կեանքի բոլոր դէպքերում մենք խստօրէն ղեկավարվում ենք նրա պատուիրաններով։ Իսկ շարիաթը պահանջում է, որ մենք ոչ մի հանգամանքում չը համարձակվենք շփումն ունենալ քրիստոնեաների հետ։ Շատ կարելի է, որ Ստամբոլում որեւէ մինը ձեզ ասել է (ոչ անկեղծօրէն), թէ շարիաթը պէտք է հասկանալ «նոր ձեւով», թէ նա իբր պատուիրում է վերաբերվել բոլոր կրօններին հաւասարապէս, բայց մենք Թիւրքաստանում հարազատ հաւատացեալներ ենք և մենք չը գիտենք որեւէ «հին» կամ «նոր» շարիաթ։ Շարիաթը մի է, ինչպէս մի է Աստուած և Մահմէդը, նրա մարգարէն։ Եւ Աստուծոյ մեզ աւանդած օրէնքը մենք չենք կարող տարբեր կերպով մեկնաբանել։ Ահա ինչու մենք իրաւունք չունենք վերաբերվել քրիստոնեաներին այլապէս, քան թշնամաբար և ատելութեամբ։ Եւ եթէ մենք թոյլ ենք տալիս նրանց անպատիժ կերպով այցելել մեր երկիրը, այդ միայն նրա համար, որ մենք մեր մեծ փադիշահի հաւատարիմ ծառաներն ենք և պատրաստ ենք հետեւել բոլոր նրա հրամաններին և ցանկութիւններին, թէեւ դրանք մեր սրտով չը լինեն։ Ինչ վերաբերում է մեր վերաբերմունքին առ մեր քրիստոնեայ հայրենակիցները, որոնք ապրում են մեր մէջ, կամայ-ակամայ մենք պէտք է պահպանենք նրանց հետ յարաբերութիւններ, թէեւ նրանք մեզ օտար են և մենք նրանց ատում ենք։ Մենք ապրում ենք Քիւրդստանում, մենք քիւրդեր ենք, ուստի և ոչ մի ճանապարհ, հեռագիր, ժանդարմ և ուրիշ եւրոպական նորութիւններ չենք ուզում և մեզ պէտք չեն. ինչ որ մեզ պէտք է, մենք ձեռք կը բերենք մեր սեփական հրացաններով…»։

Մի այլ թղթակցութեան մէջ, Օլգենինը հաղորդում է իր խօսակցութիւնը «Դաշնակցութիւն» կոչված հայ կուսակցութեան շէֆերից մէկի հետ, որ առաջ կը բերենք յաջորդ անգամ։

ԿԻԼԻԿԵԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

Ադանա, 15 փետրուար

Հակառակ Անատոլուի ներսերը տեւող օդին խստութեան, մեր կողմերը եղանակը արդէն գարնանային է ու փափուկ։

Պոլսոյ թղթատարը, այս միջոցներուս, յաճախ 3—4 օր ուշացումներ կունենայ՝ Հայդար-փաշա—Կոնիա երկաթուղիին ձիւնի տարափներէն փակուելուն հետեւանքով։ Բաղդադի երկաթուղիին գերման ձեռնարկուները, որ իրենց երկրի խիստ ձմեռին մէջ բնաւ պիտի չհանդուրժէին և թողնէին որ երկաթուղին օրերով յետաձգումներ ունենայ՝ ճամբորդները և ճամբորդութիւնը տաղտկալի և անհնարին կացութեան մը մատնելով, մեր երանելի երկրին մէջ և ոչ իսկ հոգ կընեն առանց դարմանելու համար։ Զի որ վերջապէս հոս Թիւրքիա է, իրենց Թիւրքիոյ մէջ են, աղէկ թէ գէշ, հոս ամեն ինչ մէկ գին է, որով և ծայրայեղ բծախնդիր գերմանացին հոս մեզ նման մենէ աւելի անհոգութեան և կամայականութեան ազնեւցին օրինակները կը պարզէ։

Մեզի համար, իրենց կարծիքովը, ամեն վիճակն ալ—բան է թէ գէշ ըլլայ—կը յարմարի։

Այս վիճակը ուրիշ պարագաներու մէջ ևս երեւան կելլէ յաճախ, և գերման պաշտօնէութիւնը իր երբեմն տեառն կոշտ տիպարը կը ցուցադրէ, երբ խնդիրը տեղացիներու հետ յարաբերութեան կուգայ։

Երկաթուղիի վարչութեան և գործունէութեան մէջ, կարելի է ըսել, ոչ կարգ կայ, ոչ կանոն։ Բացարձակ քմահաճոյք մըն է որ կը տիրապետէ։ Ո՛չ կառավարական հսկողութիւն կայ և ո՛չ ալ անոր ազդեցութեան հետք մը։ Պաշտօնէութիւնն ինքն է ամեն ինչը և ամեն օր և ամեն ուղեւոր համաձայն փոփոխող՝ կարգ ու կանոնին։ Եւ երբ ճարահատ վաճառականը փոխադրական այդ անկանոնութեանց դէմ համարձակուին ակար բողոք մը իսկ լսելի ընել, միակ պատասխան մը ունին ստանալիք. «Գոհ չէք նէ, գործերնուդ գացէք, ուզած կերպովնիդ փոխադրեցէք»։

Եւ որովհետեւ երբ երկու չարեաց փոքրագոյնը՝ կառապանաց դասական մեր երկրին մէջ՝ նորէն գերման երկաթուղին է, իբր ամեն անյարմարութիւններովը միասին, բնական է թէ ժողովուրդը գլուխը և վիզը ծուռ, լուռ՝ անպայման համակերպելու կը ստիպուի։

Լուսաւորեալ երկիրներուն մէջ հանրային սպասաւորութիւնքը կառավարութեանն իսկ փափաքովը ժողովրդեան պէտքերը գոհացնելու վիճակի մէջ կը դրուին, և ամէն անկանոնութեան և զեղծումի պարագային եղած գլխաւորութիւնքը խիստ քննութեան և նկատողութեան կառնուին, բայց մեր մէջ, ուր, ճիշդն ըսած, ձուկը գլխէն հոտած է… ասոր բոլորովին հակառակ երեւոյթն է որ կը թագաւորէ։

Կառավարութիւնը արդէն բարեկարգ գործի և գործունէութեան գաղափարը ինքն իսկ չունի և չուզեր. և եթէ ասոր յաւելնենք և այն պարագան, որ ինքն ալ ոեւէ հասարակ Թիւրքիացի մահկանացուէ մը աւելի ազդեցութիւն չունի օտար այս հաստատութեանց քովը, դիւրաւ կը հասկցուի ժողովրդեան անպաշտպան կացութիւնը հանդէպ եւրոպացի քաղաքակիրթ այդ ընկերութեանց, որոնց նպատակը, հեռու ուրիշ ամեն բանէ, շահիլը և միայն շատ շահիլն է ի վնաս երկրացոց։

Եթէ այսպէս կվարուին իրենց միաբան գերմանացիք իրենց սառն, կոշտ և խստամոլ ընթացքովը դէպի երկրին բնակչութիւնը, անկէ շատ տարբեր չեն, օրինակի համար, կառավարական այն պաշտօնատուները, որոնք իրենց բնութեամբն իսկ ժողովուրդին հետ մշտակայ շփումի մէջ են, այսպէս, օրինակի համար, մաքսատուն, պօստ, հեռագրատուն և այլն։

Սահմանադրութենէն առաջ, բնական է թէ, ոչ ոք հպատակ մահկանացուներէն կըրնար և մտքէն կանցնէր զանոնք ամենափոքր չափով մը քննադատել։

Զեղծումներու, անկանոնութեանց և քմահաճոյից բոյն այդ պաշտօնատանց հանդէպ ջնջին ակնարկն իսկ բաւական էր հեղինակը պատուհասելու հակակառավարական ամբաստանութիւններով։

Սահմանադրութենէն վերջ, փառք Աստուծոյ, խօսելու և քննադատելու ժողովրդական իրաւունքը թէեւ ճանչցուեցաւ և հռչակուեցաւ, բայց ասոր ալ փոխարէն այդ պաշտօնատուներն ևս ազատութեան միևնոյն և «հաւասար» իրաւունքովը ապառաժէ անտարբերութիւն մը զգեցան։ Ժողովուրդը եթէ իրաւունք ունի զիրենք ուզածին չափ քննադատելու, իրենք ալ նոյնչափ, և մանաւանդ աւելի, իրաւունք ունին չլսելու, և լսած ատեննին ալ՝ հետեւանք մը չտալու…։

Ահա թէ ինչու թէեւ ազատութեան և օրինաց յարգումի գերերջանիկ շրջան մը կապրինք, սակայն վերոյիշեալ և նման կառավարական հաստատութիւնքը կը շարունակեն ըլլալ և մնալ՝ իրենց էութեան մէջն իսկ՝ անփոփոխ և թերեւս աւելի յոռի։

Ինչու իրենք ևս չօգտուին սա մեր երկրի տարօրինակ «ազատութեան» տարօրինակ առաձգականութենէն…։

Ահա թէ ինչպէս մեր մէջ ամեն երեւոյթներ կը փոխուին և կը կերպարանափոխուին, բայց բնաւ ոգին և գործադրութեան այն եղանակը, որմէն միայն երկիրը և ժողովուրդը պիտի օգտուէին։ Ու այսպէս ալ եկած, այսպէս ալ պիտի երթայ…։

Դիտող

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՎԵՐԱԾՆՈՒԹԵԱՆ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ *)

II

Մեր դպրոցական փշոտ, տատասկ տենդային անցողական տրամադրութե և բազմապիսի վնասակար ձգտումնե անչափ լի ասպարէզում եղած կրթակ անկեղծ գործիչների փոքրաթիւ խ ապագայի փայլուն հեռանկարով ա անյուսահատ, անմռունչ տանում էր ն մահաշունչ մղձաւանջի պատճառած կալի հարուածներ։

Այն, ինչ որ անկարելի էր իրակա նել մի անգամից գոյութիւն ունեցող հասարակական համեստ ուժերով, սակ վերակենդանութիւն ստացաւ ժամա ընթացքում հասարակութեան կոչվ ջանքերի շնորհիւ։

Ժամանակակից կեանքի խեղացի ձերը, ժողովրդի կուլտուրական-կրթ հասունացած պահանջները դպրոցն պատրաստեցին դպրոցական միայն ֆէսիոնալ գործիչների մի բաւականի շոր կօնտինգէնտ, որը յաղթահարելով գործունէութեան ընթացքում պատ բոլոր խոչընդոտները, արգելառիթ պա հարները՝ ամբողջապէս նուիրվեց իր փայլած, պաշտած կոչման, հասարակա խոպան ամ դաստանը կուլտուրապէս մշ լու անչափ ծանր միսիային։ Իսկ այդ՝ թեմական տեսուչներն իրանց սոր ուշադրութիւնն ուղղեցին կրթ այն աչք ծակող դեֆեկտների վրա, շաւատափոյթ վերացումից էր կախված բոցի արդիւնաւէտ, անսայթաք գործ նէութիւնը։

Անվիճելի փաստ է, որ մեր ուսուցչ թեան ճնշող մեծամասնութիւնը դպրոց կան ասպարէզ նետվեց առանց կանոնա մասնոր պաշարի, մանկավարժական բանական էական գիտելիքների և կան հմտութեան։

Անցան երկար տարիներ, ուսուցչի տարած անհատական անխոնջ, շատ գամ հակամանկավարժական էքսպերիմ ները համարեա բան չաւելացրին մասնոր աղքատիկ պաշարի վրա։ Նրա արդիւնաւէտ գործունէութիւնը տանում նանման անձուկ հետեւանքի…

Գաւառական աւելի զգայուն, աւելի տակից ուսուցիչը դառն ցաւով վերք լով իր մօտիկ անցեալի անմիտ, ան սխալները, ապարդիւն փորձերը և փ դրած անպատեհ եռանդը՝ միթէ խորքից, արտասուալից աչքերով չի ցագանչի.

О еслибы возвратить мнѣ,
Юпитеръ, потерянные годы!…

III

Թեմական տեսուչների 3-ամեայ գործ նէութեան կորիզն եղել են փորձնակ դասերը, որոնք մեծ չափով նպաստում ուսուցչի մանկավարժական հմտութեան

«Երկու ուս. տարվայ ընթացքում տր է 142 փորձնական դաս, որին ներկայ գտնվել 760 մարդ, սրանցից 515-ը ուս ներէ դասատուներ, իսկ միւսները՝ հոգա ձուներ և հիւրեր» (Տես «Տեղեկագ էջ 109)։

Սկզբնական շրջանում, դպրոցական նորմալ պայմանների շնորհիւ, փորձն դասերը չեն տուել սպասելի արդիւնք ռայել են շատ անգամ տեղական ուսու կան խմբերի խաղաղ կեանքի և համեր գործունէութեան խանգարվելուն։ Քննա տութեան ժամանակ առաջ են եկել ան տական մասնաւոր մանր հաշիւներ, վի

---

*) Տես «Մշակ» № 51.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՅՈՒՍԱՀԱՏ ԲՈԼԳԱՐՈՒՀՈՒ ԱՆԷԾՔԸ

(Բալկանեան պատերազմի էպիզօդներից՝ ըստ ականատեսի պատմածի)

Լիւլէ-Բուրգասի արիւնահեղ ճակատամարտը դեռ նոր էր վերջացել և նրան յաջորդել էր մի սոսկալի խաւար ու ցուրտ գիշեր։ Սև ու մռայլ ամպերով ծածկված երկինքից ժլատ անձրեւի հատ-հատ կաթիլներ դեռ նոյն օրը երեկոյեանից սկսած շարունակում էին թափվել պատերազմի դաշտի վրա։ Հիւսիսից փչող միապաղաղ ցուրտ քամին էլ լրացնում էր բնութեան այս սգաւոր տեսարանը։ Այո, բնութիւնը սգում էր այդ րոպէին. միշտ անտարբեր բնութիւնը կարծես այդ օրը զգացմունքի էր եկել և չը կարողանալով տանել իր իսկ գրկում նետված սոսկալի եղեռնի ցնցող տեսարանը—մարդկային յօշոտված ու այլանդակված դիակների այն անթիւ ու սարսափահար կոյտերը և նրանցից հոսած արեան այն անթիւ ճակները—ծածկել էր ամեն ինչ մի թանձր, անթափանցելի խաւարով։

Ամբողջ դաշտի վրա տիրում էր մահվան սարսուռ ազդող գերեզմանային լռութիւն։ Երկարատեւ ու կատաղի կռւի ընթացքում հրազէնների ահագին կրակներից խանձված ու փոթոթված մայր երկրի կուրծքը դողահում էր անձրեւի ու ցուրտ քամու տակ, հանգստանում էր այս մեռելային լռութեան մէջ։ Ոչի՛նչ, ոչ մի կենդանի շունչ չէր խանգարում այս հանգիստն ու լռութիւնը, բացի մերթ ընդ մերթ լսվող մարդկային թոյլ հառաչներից ու նուաղած տնքոցներից. սրանք էլ կռւի դաշտում լքված այն կիսակենդան վիրաւորներն էին, որոնք դեռ գալարվում էին անխիղճ մահվան ճիրանների մէջ, որոնք դեռ պայքարում էին մահվան դէմ իրանց անյոյս, անզօր ուժերով և որոնք արդէն պարտվելու և յաղթող մահվանը յաւիտենապէս կուլ գնալու վրա էին։

Ուշ գիշեր էր։ Դարձեալ լուռ, դարձեալ թանձր խաւար, դարձեալ կաթկթող անձրեւ։ Միայն այժմ հեռու հորիզոնում ըմբոստ փայլակն սկսել էր մերթ ընդ մերթ փայլատակել և վայրկենապէս լուսաւորել դիականածածկ դաշտը։ Եւ ամեն անգամ, երբ լուսաւորվում էին անթիւ զոհերի սարսափահար, գունատ դէմքերը, բնութիւնը սոսկումի մի որոտ էր արձակում։ Սակայն անխիղճ փայլակը շարունակում էր ըմբոստանալ. նա փայլատակում էր մերթ ուժգին, զօրեղ լոյսով և մերթ՝ թոյլ ու անզօր փայլով, առանց ուշադրութիւն դարձնելու բնութեան սարսափահար գոռոցներին։

Հեռւում, դաշտի մի կողմում տարածված բլուրների վրա, պսպղում էին աստղանման լոյսեր։ Իսկ կայծակը, որ փայլատակում էր ասես հէնց այդ բլուրների ետեւում, պարզ կերպով գծագրում էր հորիզոնի վրա բազմաթիւ վրանների գմբէթանման ձեւերը։ Օրվայ հերոս յաղթական բանակն էր դա, որ բանակել էր այդ բլուրների վրա մի կարճատեւ հանգիստ առնելու, որպէսզի կազդուրէր իր քամված ուժերը և պատրաստվէր յետագայ գործողութիւնների համար։ Երեւի պահակ զինւորներն էին միայն արթուն. քամին երբեմնակի բերում էր իր սուլոցների երկար ու խորհրդաւոր ձայները։

Այդ միջոցին, վայրկենական փայլակի լոյսի տակ, դիականածածկ դաշտի վրա երեւաց յանկարծ մի ուրուական։ Կարծես դիակներից մէկը լինէր դա, որ շունչ առել ու վեր էր կացել, և կամ ինչ-որ մարմնացեալ ոգի, որ, մերթ խոնարհվելով գետին ու դիակները շօշափելով ու մերթ ոտքի ելնելով ու քայլելով, դիմում էր դէպի հեռւում փայլփլող լոյսերը, դէպի բանակավայրը։ Գիշերվայ թանձր խաւարի մէջ խարխափելով առաջ էր գնում նա և ամեն անգամ նրա ոտքերն անսպասելի կերպով դիակների հանդիպելիս՝ վայր էր ընկնում, գրկվում էր սառը դիակների հետ, մի սարսափահար ճիչ արձակում և նորից ուժով վեր կենալով՝ շարունակում էր իր ճանապարհը դէպի իր կէտ նպատակը։

Ուրուական չէր նա, ոչ էլ կենդանութիւն առած դիակ։ Նա մի սովորական մահկանացու էր, այն եւս մի թոյլ գեղատի կին արարած, որ սակայն, արհամարհելով ճանապարհի վտանգը, գիշերվայ սոսկալի խաւարը, դիակների սարսափը և իր անզօրութիւնը այս բոլորի հանդէպ, յանդգնել էր դուրս գալ և ընկնել այս սարսափների գիրկը այն միջոցին, երբ գազաններն անգամ, բարւոք համարելով սոված մնալ, սոսկացել էին դուրս գալ իրանց տաք որջերից։

Բայց ինչն էր արդեօք նրան այստեղ բերողը, ո՞ր ծայրայեղ կարիքը, ո՞ր անդիմադրելի մղիչ ուժը, ո՞ր խելացնոր զգացմունքը. այդ դժուար չէր կռահել։

Քանի-քանի անգամ նա սայթաքեց և քանի անշնչացած մարմինների վրա ընկնելով, առեւ նրանց առաջ ծունր դնելով, և հետզհետէ վարժվելով նրանց սարսափին և սառնութեանը, նա մօտեցաւ վերջապէս լոյսերին և ուժասպառ գետին փռվելով՝ «օգնութի՜ւն» կանչեց նուաղած, անզօր ձայնով գիշերվայ անթափանցելի խաւարի ու ընդհանուր լռութեան մէջ։

Յուսահատական այս թոյլ կոչը զգաստ պահակներին անգամ լսելի չեղաւ։ Նա, անզգայացած, դեռ փարվել էր ցուրտ գետնին։

Քիչ յետոյ նա ուշքի եկաւ, գլուխը բարձրացրեց, ոտքի ելաւ և հաւաքելով իր վերջին ուժերը՝ երկրորդ անգամ ձայնեց.

— Օգնութի՜ւն։

Բոլգարերէն արտասանված օգնութեան աղաղակն այս անգամ գրաւեց պահակների ուշադրութիւնը, և նրանցից մի քանիսը միաժամանակ վազ տուին դէպի ձայնը։

— Հէյ, ո՞վ ես, թշնամի թէ բարեկամ,— ձայն տուեց պահակներից մէկը, պահելով իր հրացանը դէպի երեւացող անորոշ շուաքը,—պատասխանիր, թէ չէ իսկոյն կը կրակեմ։

— Ձեզանից եմ, խնայեցէք, մօտ եկէք, օգնեցէք։

Զինուորը հետզհետէ մօտեցաւ միշտ հրացանն ուղղած դէպի անծանօթը. և հազիւ մի քանի քայլ էր մնում նրան հասնելու, երբ անծանօթը նետվեց յանկարծ դէպի զինուորը և փարվեց նրա ոտների առաջ։ Շփոթված պահակը, որին փոխարինելու էր եկել նոյն րոպէին մի ուրիշ զինուոր, վեր բարձրացրեց անծանօթին, տարաւ նրան մօտակայ վրանը և երբ իմացաւ, որ նա մի բոլգար օրիորդ է, այլայլվեց ու մի սարսուռ անցաւ նրա ամբողջ մարմնով

— Ո՞վ էք, ինչ էք անում այստեղ ժամին, օրիորդ։

— Ոչի՛նչ… այդ մի հարցնէք. բարի ղէք միայն տանելու ինձ զինուոր Իվան Դ նէֆի մօտ,—խօսեց խորհրդաւոր մի նուէին առանց մի րոպէ իսկ հանգստա լու։

Զինուորը նայեց իր տասնապետի երե Վերջինս, անխօս, առաջնորդեց օրիո իր օֆիցէրի վրանը։

Տարաժամ ու տարապայման հիւրը դ մանք պատճառեց օֆիցէրին։

— Մի զարմանաք, պարոն օֆիցէր ինձ տեսնում էք այստեղ այս ժամին եկել եմ տեսնելու զինուոր Իվան Դանէ խնդրում եմ բարի եղէք և թոյլ տ ինձ նրան տեսնելու մի քանի րոպէ միայն։

— Բայց ո՞վ էք դուք, ինչպէս էք այստեղ,—հարցրեց ապուշ կտրած օֆիցէ

— Սօֆիացի մի բանւորուհի եմ, պ օֆիցէր, խնդրում եմ, թոյլ տուէք, ես նշանածն եմ։

— Օրիորդ, գիտէք արդեօք, որ ձեր տեղ գալով օրէնքը ոտնատակ էք տա պատասխանեց սառը կերպով օֆիցէրը Մի՞թէ ձեզ ծանօթ չեն զինուորական տերազմական օրէնքները. միթէ չը գի որ պատերազմի ժամանակ՝ զինուորնե խստիւ արգելված է մինչև անգամ հար կապութիւն ունենալ իւրայիններին ուր մնաց թէ նրանց հետ տեսնվել։

— Պարոն օֆիցէր, պաղատում եմ մի՛ մերժէք, համարեցէք ինձ մի բ ութիւն։ Դուք գիտէք, թէ ինչպէս ուրանքներ. խառնել են էականն երկրորդականի հետ, մանկավարժականը հակամանկավարժականի և այդ տեսակէտով տապալված են համարել նոյնիսկ քաջերին, փորձված ուսուցչի դասերը...

Բայց վերջին երկու ուսումնական տարում, թեմական տեսչի կարծիքով, մեր ուսուցչութիւնը զգալի չափով առաջադիմել է, փորձվելու և զարգանալու տրամադրութիւն է ցոյց տալիս:

Առանձնապէս այս տարի կազմակերպված փորձնական դասերը հասել են որոշ նպատակի. քննադատութիւնը տարվել է անհամեմատ կանոնաւոր, խաղաղ և արդիւնաւէտ:

Վերջերս Մեծ-Ղարաքիլիսայում թեմական տեսուչ Թ. Խզմալեանի կազմակերպած փորձնական դասերի քննութեան ժամանակ պարզվեց, որ հայ ուսուցիչը, գիտակցելով իր կոչման ամբողջ ծանրութիւնը, զգում է անցեալում կատարած աններելի սխալները և, լաւ հասկանալով ժամանակակից դպրոցի ռացիօնալ պահանջները, պատրաստ է ուսումնասիրել, իւրացնել այն բոլոր մեթօդները, խելացի պրիօմները, որոնք կը նպաստեն կրթական մեծ գործի զարգացմանը և տարածվելուն:

Մեր դպրոցական կեանքում հէնց այս նոր, առաջադիմական հոսանքը բաւական է ապացուցանելու, որ մենք ապրում ենք ժողովրդի մտաւոր վերածնութեան նախօրեակին:

Մ. Ղազարեան

Մեծ-Ղարաքիլիսա

ՆԱՄԱԿՆԵՐ ՆԱԻԹԱՇԽԱՐՀԻՑ

Մեր հասարակական գործիչների պաշտպանը

> «...Բագուի հասարակութիւնը, նրա գործիչները կարող են ունենալ իրանց պակասութիւնները. դա ուրիշ խնդիր է: Բայց Շամախու թեմի առաջնորդ Անանիա սրբազանը չը պիտի լինի նրանց դատաւորը: Եւ ոչ Ս. Գարագաշը դատախազը»:
>
> Ռ. Յովհանջանեան («Բ. Ձայն») № 26.

«Իմ դատաւորս դու, կամ քեզ նման մարդիկ չը պէտք է լինեն»:

Այդ մի բանալ դարձուածք է, որ գեղեցիկ զէնք է դարձել մի շարք մարդկանց ձեռքին, ու նեղն ընկած ժամանակ, երբ այլեւս ասելու ոչինչ չունեն, նրանք հրապարակ են նետում այդ դարձուածքը:

Փոքր ինչ խօսենք «Баку» լրագրի նախկին աշխատակից և «Բագուի Ձայնի» տէրերից մէկի, պ. Ռ. Յովհանջանեանի վերջին յօդուածներից մէկի մասին, որը այս օրերս լոյս տեսաւ «Բագուի Ձայն» թերթում, և որի մի նախադասութիւնը մենք մեր յօդուածի սկզբում առաջ բերինք:

Մի տարօրինակ հանգամանք:

Հայ իրականութեան մէջ կարծես ոչ մի թերթ չը պէտք է լոյս աշխարհ գայ, որ իսկոյն եւեթ «Մշակի», Հ. Առաքելեանի, Ա. Քալանթարի օձիքից չը բռնէ:

Կարծես թէ ճակատագրի մի անողոք որոշմամբ ոչ մի թերթ մեր մէջ չէ կարող գոյութիւն ունենալ, եթէ իր էջերը չը զարդարէ «Մշակ»-Առաքելեան-Քալանթար եղբայրութեան դէմ ուղղված հայհոյանքների մարգարիտներով:

Ճակատագրական այդ սովորութեանը հետեւելով, մեր պ. Յովհանջանեանն էլ, «Մշակի» այդ նախկին աշխատակիցը, որ տարիներ առաջ անպատւութիւն չէր համարում Առաքելեանի խմբագրած թերթին աշխատակցելու, այսօր ի լուր աշխարհի այդ նոյն Առաքելեանին «կլեաուզնիկ» է անուանում:

Ինչու:

Որովհետեւ Առաքելեանը կոխել է նրա ոտքի ցաւոտ պալարը:

Բայց այդ մի կողմ. անմահ Կրիլովի «Փիղն ու քոթոթը» առակը չափազանց յաճախ է կրկնվում հայկական իրականութեան մէջ, և դրա վրա զարմանալ չէ կարելի:

Բագուի մէջ «յայտնի» անուն ունեցող պ. Յովհանջանեանը մի տարօրինակ փութկոտութեամբ այսօր իր վրա է վերցրել Բագուի հայ հասարակական գործիչների պաշտպանի դերը և, պէտք է խոստովանել, տանում է այդ դերը բուռն եռանդով:

«Մշակի» թղթակից Ս. Գարագաշը իր թղթակցութեան մէջ նկարագրում է իր ունեցած խօսակցութիւնը Շամախու թեմի առաջնորդ Անանիա եպիսկոպոսի հետ, որտեղ վերջինս գանգատվում է մեր հասարակական գործիչների անտարբերութեան վրա դէպի հասարակական բոլոր գործերը:

Այդ մի աչքառու փաստ է, մի փաստ, որը դժբաղդաբար հերքել չէ կարելի, այնքան ակնյայտ են այդ անտարբերութիւնը ապացուցող փաստերը:

Եւ ահա մեր «հասարակական գործիչների» «պաշտպանները» յուզվում են, փրփրում:

Նրանց բարի անունը վտանգված է, պէտք է վերականգնել այդ անունը՝ ինչ գնով էլ որ լինի:

Եւ ահա «Բագուի Ձայնի» խմբագրութեան մէջ թխվում է պ. Յովհանջանեանի հռչակաւոր յօդուածը, ոչ մի բողոքի չարժանանալով մեր հասարակական գործիչների կողմից:

Երբ մէկին մեղադրում ես որևէ յանցանքի մէջ և նա արդարանալու փաստեր չունի, նա սկսում է նոյն մեղադրանքները բարդել ուրիշների վրա:

Նոյն կերպ են վարվում նաև Բագուի հասարակական գործիչները յանձին պ. Յովհանջանեանի:

Փոխանակ իրանց արդարանալու, փոխանակ ապացուցելու, որ Անանիա սրբազանի ասածները սխալ են, նրանք մի շարք մեղադրանքներ են բարդում իրանց մեղադրողի վրա:

Եւ... կարծում են, որ դրանով արդարացան:

Ողորմելի, խղճուկ մարդիկ:

Սնանկ տրամաբանութիւն:

Եւ, ի հարկէ, ուրիշ դատողութիւն էլ չէր կարելի սպասել:

Անանիա սրբազանը Բագու է գալիս և միանգամայն հակառակ մեր մէջ ընդունված սովորութեան՝ մեր չակերտաւոր հասարակական գործիչների օգնութեանը չէ դիմում դպրոցական ֆոնդի ժողովարարութեան գործը գլուխ բերելու համար:

Ժողովրդական այդ մեծ գործը գլուխ բերելու համար, նա ժողովրդական ամենալայն խաւերի աջակցութեան է դիմում, իսկ այդ բանը, ի հարկէ, դուր չէր կարող գալ մեր գործիչներին:

Նախկին առաջնորդների պէս, փոխանակ ազգային գործերի կապալառուների կամակատար ստրուկը դառնալու, նա յանդգնում է նրանց մեղադրել: Ի հարկէ որ մեր «գործիչները» պէտք է փրփրէին:

Եւ փրփրեցին, յուզվեցին ու... ասպարէզ նետեցին պ. Ռ. Յովհանջանեանին:

Եւ նա ասում է.

«Բագուի հասարակական գործիչների դատաւորը չը պէտք է լինի Անանիա սրբազանը, և դատախազը՝ Ս. Գարագաշը»:

Մի՞թէ:

Դուք այդպէս էք կարծում, պ. Յովհանջանեան:

Բայց դուք չարաչար սխալվում էք, յարգելի պարոն:

Հասարակական գործիչների գործունէութեանը դատաւոր լինել կարող է ամեն մի մարդ, բայց նրա պաշտպանը կարող է լինել արդեօք մի մարդ, որի «փառաւոր գործունէութիւնը» հասարակական ասպարէզում, իբրև «Դժբաղդ կանանց պաշտպանող ընկերութեան» քարտուղար՝ դեռ չի մոռացված Բագուում:

Այդ արդէն ուրիշ հարց է, և արժէ փոքր ինչ մտածել այդ մասին:

Վաղարշակ Թումանեան

Բագու

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Կիրակի, ամսիս 10-ին, պատարագին Վանքի աւագ եկեղեցում կարդացվելու է Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի կոնդակը Մեսրոպ եպիսկոպոսին Թիֆլիսի թեմի առաջնորդ կարգելու մասին: Կոնդակի ընթերցմանը ներկայ են լինելու Թիֆլիսի ամբողջ հոգեւորականութիւնը և միջնակարգ ու ծխական դպրոցների հոգաբարձութիւնները իրանց ուսուցչական կազմերով: Դրանից յետոյ հոգեւորականութիւնը կը ներկայանայ թեմակալին՝ առաջնորդարանում:

◆ Վերադարձաւ և ստանձնեց իր պարտականութիւնները Թիֆլիսի քաղաքային վարչութեան անդամ Ժուրուլին:

◆ Մարտի 17-ին Թիֆլիսում կայանալու է անդրկովկասեան անասնաբոյժների համագումարը:

◆ Սահմ.-ռամկավարները հարցապնդում են ներկայացրել զինուորական և արդարադատութեան մինիստրներին այն մասին, թէ արդեօք մտադրութիւն կայ վերաքննել Նովօրօսիյսկի հանրապետութեան և Դաշնակցութիւն կուսակցութեան գործերը, որոնց քննութիւնը վարել է քննիչ Լըժինը հիւանդ դրութեան մէջ: Այդ առիթով արդարադատութեան մինիստրութեան մօտ եղող շրջաններում խօսում են, որ, Դաշնակցութեան գործը կը վերաքննվի միմիայն այն դէպքում, եթէ Լըժինը ճանաչվի աննորմալ: Իսկ եթէ նա միայն հիւանդ նկատվի, այն դէպքում գործը չի վերաքննվի:

◆ Պետերբուրգից տեղեկացնում են, որ մերժվել է վրաց ազնուականութեան միջնորդութիւնը՝ միացնելու Կախեթի երկաթուղին Սղնախ—Բագուի երկաթուղագծի հետ:

◆ Ինչպէս տեղեկացնում են «Зак.»-ին, Բարձրագոյն հրովարտակի ուժով՝ Թիֆլիս քաղաքի մի միլիօն պարտքը ոստիկանութեան պահպանութեան համար վճարվելու է 20 տարվայ ընթացքում:

◆ Թիֆլիսում այս մարտի 13-ին Ժողովրդական Տանը, ռուսաց դրամատիկական խմբակի նախաձեռնութեամբ, կայանալու է ժողովրդական հանդիսաւոր ներկայացում Իւրի Դմիտրիեւիչ Կօրեակօվի բեմական գործունէութեան 20-ամեակի պատւին:

◆ Այսօր, շաբաթ, երեկոյեան ժ. $7^1/_2$-ին նշանակված է Հայոց Ազգագրական Ընկերութեան հրապարակական նիստը նոյն Ընկերութեան դահլիճում (Լերմօնտօվսկի փ. № 1): Ս. Ղլտճեանը կը դասախօսէ հետեւեալ նիւթի մասին. «Սովորոյթ և ազգային ու եկեղեցական իրաւունքը ամուսնական հաս ու չհասի խնդիրներում»:

◆ Այսօր Հասարակական ակումբում տ. Ջիէրձէն կարդալու է ռեֆերատ մարդու ներքին աշխարհի մասին: Յետոյ կը լինի զրոյց ու երաժշտական բաժին:

◆ Կովկասեան Կայսերական Բժշկական Ընկերութեան շինութեան մէջ վաղը ժամը 12—1 բժ. Ազատարեանը հայերէն կը դասախօսէ մորթու և բնակարանների առողջութեան մասին: Բժ. Կօնդրատիէվան ժամը 6—7 ռուսերէն կը դասախօսէ դիֆտերիտի մասին: Մուտքը ձրի է:

◆ Թոյլատրված է ներկայացնել կովկասեան բեմերի վրա Շիրվանզադէի «Նամուս» պիէսը վրացերէն Գ. Միրզաեանի թարգմանութեամբ, թուրքերէն՝ «Ջավանլար Մաշադի» դրամա 4 գործ., և Մամէդ-զադէի 3 գործ. «Ջաբրը Պարսկաստանում» դրաման:

◆ Կիրակի, մարտի 10-ին, Ժողովրդական Տանը բժ. Մուսխելօվը դասախօսելու է վրացերէն լեզուով՝ աչքի հիւանդութիւնների մասին: Դասախօսութիւնից յետոյ լինելու է համերգային բաժին:

◆ Թիֆլիսի յոյն դրամատիկ սեկցիայի վարչութեան որոշմամբ, կիրակի, մարտի 10-ին, ցերեկվայ ժամ 11-ին, յունաց Նիկօլաեվսկի եկեղեցում (Սօֆիյսկի փողոց) կը կատարվի հոգեհանգստեան կարգ սպանված հելլէնական Գէորգ I-ին արքայի յիշատակին յունաց լեզուով:

◆ Այսօր պարսկական նոր տարվայ (Նօվրուզ) առիթով շնորհաւորանքներ են լինելու Թիֆլիսի գեներալ հիւպատոսարանում:

◆ Քութայիսի գաւ. Սազարալի գիւղում գիւղացիները ջրհոր փորելու ժամանակ գտել են IX-րդ դարի 300 հին ոսկէ դրամ ու զէնք:

◆ «Баку» թերթը թարգմանօրէն տպեց Հ. Առաքելեանի յօդուածները, տպված «Մշակի» մէջ «Ռօմանօվների Արքայական Տունը և հայերը» վերնագրով:

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂ ԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Երգիչ Ա. Շահ-Մուրադեանի կօնցերտը

Երգիչ Ա. Շահ-Մուրադեանը հանդէս եկաւ Թիֆլիսի հասարակութեան առաջ յատուկ կօնցերտով, որը տրվեց հինգշաբթի օր, մարտի 7-ին, Թիֆլիսի Արտիստական Ընկերութեան դահլիճում:

Համերգի արած տպաւորութիւնը նպաստաւոր էր երգչի համար:

Շահ-Մուրադեան ունեցաւ աջողութիւն և շահեց ոգեւորված ծափահարութիւններ:

Հաճութեամբ արձանագրում ենք, որ Շահ-Մուրադեանը ունի ախորժելի տեմբրով, մաքուր հնչմամբ տենօրային գեղեցիկ մի ձայն, որը գրաւիչ է հանդիսականի համար:

Երգչի ձայնը մշակված է և եւրօպական երաժշտութեան ընտելացած: Շահ-Մուրադեանը երգում է ճաշակով և զգացմունքով:

Նա սկսեց իր կօնցերտը Բիզէի «Մարգարիտ որսողներ» օպերայից վերցրած մի արիայով, որը սկզբից իսկ ստեղծեց նպաստաւոր տրամադրութիւն երգչի համար:

Մենք շատ հաւանեցինք Շահ-Մուրադեանի երգածը թէ Դօնիցէտտիի «Una Furtiva Lagrina» և թէ Բեմբերգի «Հնդկական երգ» գեղեցիկ ստեղծագործութիւնների կատարումները: Վերջինս երգվեց ջութակի և դաշնամուրի ներդաշնակութեամբ:

Շահ-Մուրադեանը երգեցողութեան ընթացքում ունի տեական շնչառութիւն, ընդունակ է ախորժալուր պիանօյով երգել ամբողջ տողեր և հնչեցնել ուժեղ վիլ ձայն:

Երգչի թերութիւններին պէտք է վերագրել միօրինակ գունաւորութիւն պահպանելը երգերի մէջ՝ ըստ մեծի մասին մելամաղձիկ, երբեմն լալկան, և պարբերութիւնների փոխանակութեան թոյլ բնորոշումը: Իսկ ընդհանրապէս Շահ-Մուրադեանի ձայնը մի գնահատելի գանձ է՝ որի հանդէս գալը արձանագրում ենք իբրեւ ուրախալի երեւոյթ:

Համերգին մասնակցում էին երգիչ Դեսնով և ջութակահար Գ. Քալանթար, որոնք սիրալիր կերպով մասնակցել էին Շահ-Մուրադեանի կօնցերտին:

Սերոբ

Հայոց Թատրոն

Արքունական թատրօնումն եմ:

Բացի օպերայի փոխարէն այդ օրը, մարտի 7-ին «Ուր երթաս» դրաման է ներկայացվում Բագուից եկած հայ դերասանական խմբի ձեռքով, որ մի քանի գաստրօլների համար հրաւիրել է Թիֆլիսի ժող. հայ ներկայացումներ կազմակերպող սեկցիան:

Ժամը 8-ն է համարեա, սակայն թատերասրահում բացակայում է այն հասարակութիւնը, որ իր ներկայութեամբ պէտք է պատւէր Զարիֆեանի ղեկավարութեամբ հիւր եկած դերասան դերասանուհիներին: Եւ միայն տեսնում եմ մի քանի տասնեակ աշակերտ-աշակերտուհիներ ու աշխատաւոր խաւերից ներկայացուցիչներ:

Դրա պատճառը գտնելու եմ մտորում, երբ ակամայից առաջս կանգնեց այն հարցը, թէ արժէ՞ք արդեօք հայ ընդհանուր դերասանական դերդաստանից անջատված այս խմբի Թիֆլիս գալը: Կամ աւելի ճիշդ ասած՝ վերջ ի վերջոյ խումբը կը ստանայ եթէ ոչ նիւթական, գոնէ բարոյական սփոփանք:

Այդ հարցում մենք յոռետես ենք: Ահա թէ ինչու: Թիֆլիսի հայ հասարակութիւնը շատ լաւ է ճանաչում Աբէլեանին, տ. Մայսուրեանին, Ալիխանեանի նման՝ Զարիֆեանին, տ. Ազամեանին, Շահխաթունուն, որոնք Բագուի խմբի առաջնակարգ ոյժերն են կազմում այսօր: Ու սակաւ չէ եղել այն էսթետիկ բաւականութեան թիւը, որ ստացվել է Մելպօմէնի յիշեալ սպասաւորների խաղից Թիֆլիսում գտնված ժամանակ: Նոր պլիւս իրանց համբաւի վրա նրանք չէին կարող աւելացնել, որպիսի յոյսով և եկած լինեն Թիֆլիս: Միւս կողմից Բագուի խմբի ռեպերտուարի պիէսների համարեա մեծ մասը արդէն խաղացել է Թիֆլիսի հայ դերասանական խումբը:

Ապա ուրեմն կարեւոր ենք մատնանշելու, որ Զարիֆեան անգամ պարտականութիւնից դրդված իր խմբով դիմելու էր գաւառը, գաւառական քաղաքները, ուր մշտապէս զուրկ են իսկական գեղարուեստական հաճոյք ստանալու ամեն հնարաւորութիւնից և ուր ասպարէզ են գտնում սոսկ բաղդախնդիր «դերասանները»... Որքան բարիք արած կը լինէր Բագուի խումբը, եթէ իր ազատ ժամանակամիջոցում ծառայէր մեր գաւառական ժողովրդի թատրօնական պահանջներին մասամբ գոհացումն տալու:

Ինչեւիցէ. հաշտվելու ենք իրողութեան հետ: Իսկ «Ուր երթաս» բարդ ու լուրջ կատարում պահանջող պիէսի կատարեալ պատկերացումը բնականաբար բաղխվելու էր այն կարճ ժամանակին, որ խումբը ունէր այստեղ իր տրամադրութեան տակ՝ պատրաստվելու համար: Հէնց դրանից էլ խմբի խաղը կրում էր շտապ բնաւորութիւն, իսկ տեղ-տեղ տպաւորիչ եղաւ շնորհիւ Զարիֆեանի (Պետրօնիօս), Շահխաթունու (Մարկոս), տ. Ազամեանի (Լիգիա):

Մեր ուշադրութիւնից չը վրիպեց Բագուի դերասաններ Օվի Ահարոնեանի և Խաժակի խաղը, որոնցից առաջինը Քիլօնի դերում ցոյց տուեց, որ ապագայում վատ կօմիկ չէ կարող լինել: Նոյնպէս Խաժակ օրինակելի տարաւ Փաբիա Ծերունու դերը:

Միրզոյեանի նկատմամբ ասելու ենք, որ նա աւելի շուտ մի զառամեալ ծերունու

նապարհ եմ եկել և խնդրեմ կրել: Դուք էլ անշուշտ սիրած կը լինէք մէկին, գիտէք, թէ ի՛նչ է սէրը. մտէք մի րոպէ իմ դրութեան մէջ և մի մերժէք ինձ:

— Ցաւում եմ, օրիորդ, որ անկարող եմ ձեր ուզածը կատարելու: Պատերազմի ժամանակ սէրն ու սիրոյ զգացմունքները մոռացվում են: Ի՞նչ կը լինէր բանակի վիճակը, եթէ բոլոր զինուորների կանայք, մայրերը, նշանածները կամ քոյրերը գային նրանց տեսնելու և իրանց կանացի քնքշութեամբ մեղմէին նրանց մէջ կռուելու տրամադրութիւնը: Ձեր ուզածն արգելված է և անկարելի:

— Ուրեմն դուք ուզում էք, որ ես, այսքան տանջանքները կրելուց յետոյ, յետ դառնամ առանց նրան գէթ մի րոպէով տեսնելու: Անգութ, քարասիրտ...

Օրիորդի ձայնն արդէն սկսեց կերկերալ:

— Ես անգութ չեմ, օրիորդ, ոչ էլ քարասիրտ,—նահանջող տոնով պատասխանեց երիտասարդ օֆիցերը,—միայն ձեր ուզածն անկարելի է և իմ իրաւասութիւնից դուրս, հասկանում էք:

— Ո՛չ, պարոն, ես այլ ևս ընդունակ չեմ ոչինչ հասկանալու,—խօսեց օրիորդը հաստատուն տոնով:—Ես ձեզ խնդրեցի, աղաչեցի, դուք ինձ մերժեցիք: Այժմ լսեցէք. ես այդ պահանջում եմ սիրող սրտի բոլոր իրաւունքներով, ես պահանջում եմ, լսում էք: Կամ այս րոպէիս մահացրէք ինձ այստեղ և կամ կատարեցէք պահանջս. երկուսից՝ մէկը:

Օֆիցերը կարկամեց, մոլորվեց և չը գիտէր՝ ինչ անէր: Պահանջը խիստ կտրուկ էր և հրամայողական. հարկաւոր էր մի լուծում տալ նրան: Տեսնել ընդհանուր հրամանատարին՝ անհնար էր այդ միջոցին. ոչ էլ կարելի էր մի այդպիսի խնդրով նեղկայանալ նրան: Մնում էր ուրեմն զանց անել պատերազմական խիստ օրէնքը անձնական պատասխանատուութեամբ:

Եւ նա անխօս մօտեցաւ վրանի անկիւնը դրված արկղին, քրքրեց նրա միջի տետրակները և նրանցից մէկը բաց անելով իր անկողնի վրա ու թերթելով ասաց օրիորդին.

— Դուք ինձ դրիք մի այնպիսի դրութեան մէջ, որ ես ստիպված եմ իմ կեանքի գնով դէմ գնալ օրէնքին և զիջել ձեզ: Դուք կը մնաք այստեղ, ես նրան բերել կը տամ ձեզ մօտ. միայն ձեր տեսակցութիւնը շատ կարճ պիտի տեւէ. այլապէս ես կարող եմ կորչել:

— Ա՜հ, շնորհակալ եմ, պարոն օֆիցեր. դուք շատ բարի էք, ես սխալված եմ, ներեցէք խնդրեմ, դուք շատ ազնիւ էք:

Ուրախութիւնից խելքը կորցրած կոյսը չը գիտէր, թէ ինչպէս շնորհակալ լինէր օֆիցերից, որը դեռ շարունակում էր թերթոտել տետրակը:

— Ինչպէս էր ձեր նշանածը կոչվում, Իվան Դանեֆ, սօֆիացի՞:

— Այո, պարոն օֆիցեր, Իվան Դանեֆ, սօֆիացի. պիտի տեսնեմ արդեօք նրան, շուտով պիտի տեսնեմ:

— Իսկոյն, օրիորդ, իսկոյն, քիչ համբերեցէք, շուտով կը տեսնէք,—պատասխանեց երիտասարդ օֆիցերը և շարունակեց որոնել զինուորի անունը. «Վարնա... այս չէ. Սօֆիա... ահա. Բոգդանեֆ... Դելեֆ... Դանեֆ Գէօր... Դանեֆֆ... Իվան...», և օֆիցերը իսկոյն այլայլվեց. նրա անուան դիմացը կարմիր թանաքով խաչ էր դրված:

— Ի՞նչ պատահեց, պարոն օֆիցեր, էլ ինչու էք սպասում,—հարցրեց օրիորդը անհամբեր ու համարեա դողալով:

Օֆիցերը լուռ էր, անպատասխան: Նրա մտքովն անգամ չէր անցել, որ Իվանը կարող էր սպանված լինել, և մտազբաղ՝ սեւեռել էր իր հայեացքը տետրակի վրա:

Դժբաղդն էլ նայեց տետրակին, նա էլ գտաւ Իվանի անունը, նկատեց խորհրդաւոր կարմիր խաչը և գունատվեց, ոտները ծալվեցին:

— Իվան... դու էլ նրանց մէջ... նախազգում էի, սիրտս վկայում էր....

Եւ մինչդեռ խելակորոյս, յուսահատ կոյսը ծնկաչոք, գլուխը ձեռքերի մէջ առած, գալարվում, փոթոթվում էր իր անհուն կսկծից ծանր լռութեան մէջ, օֆիցերը, ասես յանցաւորի դերում, անընդունակ անգամ մխիթարական մի խօսք արտասանելու, դեռ տետրակին էր նայում:

Անցան մի քանի երկար, լուռ ու խեղդող րոպէներ:

Կոյսը ոտքի ելաւ իր իսկ ոյժերով և խելագարի նման դիմեց օֆիցերին.

— Տարէք, տարէք ինձ նրա մօտ, տարէք, որ գոնէ նրա դիակը տեսնեմ, էլ ուրիշ ոչինչ չեմ ուզում ձեզնից:

Օֆիցերը սթափվեց և հլու-հնազանդ ծառայի նման դուրս ելաւ վրանից սգաւոր կոյսի վերջին ցանկութիւնը կատարելու: Քիչ յետոյ նա վերադարձաւ մի զինուորի հետ, որ ճանաչում էր Իվանին և կռւի միջոցին նրա կողքին լինելով՝ գիտէր նրա դիակի տեղը:

Երեք հոգուց բաղկացած թափօրը մեկնեց դէպի մեռելների դաշտը: Զինուորն առջևից էր գնում լուսաւորելով ճանապարհը իր ձեռքին բռնած փոքրիկ լապտերով, իսկ օֆիցերն և կոյսը կողք-կողքի, յամր քայլերով հետեւում էին նրան: Ամբողջ ճանապարհի ընթացքում ոչ մի բառ չը փոխանակվեց. զինուորն էր միայն, որ իր «այս չէ. այս էլ չէ. նա մի մացառի մօտ էր» և նման միապաղաղ մրթմրթոցով խանգարում էր այս սպանիչ լռութիւնը:

Վերջապէս նշան արված մացառը գտնըվեց: Թափօրը կանգ առաւ և զինուորը, լուսաւորելով մացառի տակ ընկած դիակի գունատ դէմքը՝ զինուորական բարև բռնեց ու ասաց օֆիցերին.

— Ահա սա է, ձերդ մեծապատւութիւն:

Զինուորականները մի կողմ քաշվեցին. նրանց դերը վերջացաւ. սիրուհին գտաւ իր սիրածին...

Տարաբաղդ կոյսը մի րոպէ կանգ առաւ սարսափահար, ապա մի աղեկտուր ճիչ արձակելով ընկաւ թանգագին դիակի վրա:

— Իվան, կեանքս...,—կարողացաւ միայն արտասանել. հեծկլտանքը նրան խեղդեց....

Անկենդան, սառը մարմինը արձագանք չը տուեց իր սիրուհու քնքոյշ ձայնին ու արցունքներին. նա անշարժ պառկած էր գետնին, իր ցամքած արեան կողքին, փշոտ մացառի տակ:

Կոյսի յուսահատ փորձերը կենդանութեան մի նշոյլ գտնելու նրա մէջ՝ ի զուր անցան:

— Ա՜հ Իվան, այս ինչ արիր. կտրեցիր կեանքիս միակ թելը, որ դու էիր հիւսել. մարեցիր կեանքիս միակ ճրագը, որ դու էիր վառել: Եւ ում համար, քո հայրենիքի՞: Ա՛հ, նա քոնը չէ, քեզ չէ հարկաւոր այդպիսի հայրենիքը: Բաց արա մի րոպէ աչքերդ, նայի՛ր շուրջդ և տես, թէ նա ինչեր է արել.... Ապրել այսուհետեւ այս դաժան կեանքում, ուր քամել մարմինս վերջին հիւթը մայր գործարանում. ինչու համար, ում համար: Քեզ հետ միայն դիմանում էի մեր ուսին դրած կեանքի խաչի ծանրութեանը. բայց առանց քեզ այլեւս ոյժ չունեմ նրան աւելի առաջ տանելու: Թող մեր յաջորդները շարունակեն տանել նրան մինչև այնտեղ, որից հեռու այլևս չէ գնալու նա, որից այն կողմ այլևս գոյութիւն չէ ունենալու այդ ծանր խաչը.... Ո՛չ, էլ չեմ ուզում ապրել, քեզ մօտ եմ գալիս, իմ թանգագին Իվան:

Եւ հանեց իր սև վերարկուի գրպանից մի փոքրիկ սրուակ, բաց արաւ նրա խուփը, հայեացքն ուղղեց Իվանի կիսաբաց, մարած աչքերին և մի րոպէ խորասուզվեց մտորումների մէջ. այդ իր անցեալի մի քանի քաղցր յուշերն էին, որ կայծակի արագութեամբ վերարտադրվում ու անցնում էին մի առ մի նրա աչքի առաջով...

Եւ նա առանց տատանվելու խմեց սրուակի թոյնը մինչև վերջին կաթիլը, փաթաթվեց սառը դիակին, մի երկար համբոյր կնքեց նրա գունատված շրթունքներին ու վերջին անգամ շնչեց.

— Այսպէս լաւ է... Այլևս չենք բաժանվի միմեանցից....

Ականատեսները՝ օֆիցերն ու զինուորը, քիչ հեռւում կանգնած, երկուսն էլ մտախոհ, երկուսն էլ վերացած ինչ-որ անսովոր խոհերով, կարծես չէին նկատում, թէ ինչ էր կատարվում:

Կոյսն էլ դադարեց շնչելուց. նրանք դարձեալ չէին շարժվում:

Ի՞նչն էր արդեօք զբաղեցրել նրանց մտքերն այդ րոպէին....

Ժընեվ Ա. Զ.

գերում էր, քան անեղ, բռնակալ Ներոնին էր ներկայացնում։ Ի հարկէ մեղաւորը ինքը չէ, այլ համապատասխան դերակատարի բացակայութիւնը նկատի ունենք մենք։

Բաւարար էին տ. տ. Արաքս, Ազնիւ, Անդրանիկ, Ստեփանեան։

Արքունական Թատրոնի հարուստ յարմարութիւնները հնարաւորութիւն էին տուել պիէսի արտաքին մասը դնել շքեղ կերպով, որի մէջ անկասկած դեր էր խաղացել և ռէժիսէօրի բաւական նուրբ ճաշակը։ **Ե.**

Արտիստական Թատրոն

Երէկվայ մեր հաշւետւութեան մէջ ասացինք, որ Թիֆլիսի հասարակութիւնը շտապում է լցնել Թատրոնը՝ կրկին անգամ տեսնելու իր համակրանքին արժանացած դէմքերի տպաւորիչ խաղը։

Դրամատիկական ներկայացումներին յաճախող հասարակութիւնը, որքան նկատել ենք, պահանջկոտ է, անպայման սիրում է տեսնել խաղացողների ուժեղ անսամբլ, հարուստ ռէպէրտուար, պիէսների գեղեցիկ բեմադրութիւն։ Դրանով պէտք է բացատրել հէնց այն հանգամանքը, որ Բարատովի և Բէլեայէվի խմբի ներկայացումներին Թատրոնը համարեա թէ լիքն է լինում, որովհետև Թատերասէր հասարակութիւնը համոզւած է, որ իր վերոյիշեալ պահանջներին կատարեալ բաւարարութիւն կարող է տալ յիշեալ խումբը։

Ուրեմն, որպէսզի հասարակութեան ունեցած հաւատը չը խորտակվի և յոյսերը ի դերև չը ելնան, Բարատովի և Բէլեայէվի խմբի վարչութիւնը գլխաւոր հոգ պէտք է տանէ իր ռէպէրտուարը ճոխացնելու այնպիսի պիէսներով, որոնք թէ արտասահմանեան և թէ Ռուսաստանի խոշոր բեմերի վրա ունեցել են մեծ աջողութիւն և խաղացվել են բազմաթիւ անգամ։

Թէ չէ՝ դնել այնպիսի անհետաքրքրական և անբովանդակ պիէսներ, ինչպիսիք են՝ «Пылкая страсть» և «Кленъ, Баронъ и Агафонъ» կօմէդիաները, որոնք ներկայացվեցին հինգշաբթի, մարտի 7-ին, և ստիպել Թատրոնը լի հասարակութեանը ձանձրոյթի ժամեր անցկացնել, դրանով, անկասկած, հիասթափութիւն կարելի է պատճառել նրան և սառեցնել առ յիշեալ խումբն ունեցած նրա բուռն հաւատը։

Այդ երեկոյեան վերոյիշեալ կօմէդիաներում հանդէս եկան շնորհալի դերասանուհիներ Կալէլինա-Բայէն, Ազարինա, Մէնշիկօվա, Դրոզդովա և դերասաններ Բօրիսօվ, Բարատօվ, Սավելիէվ և ուրիշներ, որոնք իրանց բնատուր ձիրքերով և գեղեցիկ խաղով աշխատում էին հարթել պիէսների դէֆեկտները և պահպանել նրանց ամբողջական տպաւորութիւնը, որը և մասամբ աջողվեց նրանց։ X.

ԹԱՏՐՕՆԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

◆ Բագուից հեռագրում են մեզ, որ դերասանուհի Իզաբելլա Քալանթարը չորեքշաբթի, մարտի 6-ին, մեծ աջողութեամբ խաղացել է Զէյնաբ Թագուհու դերը «Դաւաճանութիւն» պիէսի մէջ։ Հասարակութիւնը ողջունել է դերասանուհուն ջերմագին կերպով։ Ուրբաթ օր, մարտի 8-ին, Իզաբելլա Քալանթար խաղացել է «Տրիլբի» պիէսում։

◆ Երկուշաբթի, մարտի 12-ին, Ժողովրդական Տանը, յունաց լեզուով կը ներկայացվի «Եա Տին-Տիմին» 4 գործ. ողբերգութիւնը և «Սէմիա Տարատսի» կատակերգութիւնը։ Ներկայացումը կազմակերպում է Թիֆլիսի յունաց դրամատիկ սէկցիան։

◆ Այսօր, մարտի 9-ին, Բագուի հայ դերասանական խումբը ներկայացնելու է Արքունական Թատրոնում առաջին անգամ հայերէն լեզուով «Պատուայի դքսուհին» յայտնի պատմական պիէսը։ Այս պիէսը ամեն տեղ մեծ աջողութիւն է գտել և անցեալ տարի մի քանի անգամ խաղացվել է Արքունական Թատրոնում ռուսերէն լեզուով։ Առաջին անգամ հայերէն Թարգմանութիւնը բեմ է հանվել Բագու, տիկ. Ադամեանի բենեֆիսին։ Զարիֆեանի խումբը պատրաստած ունի այս պիէսի համար շքեղ զգեստներ և նոր դեկորացիաներ։

ՄԱՄՈՒԼ

Գերմանական «Köln. Zeitung» լրագիրը նորերս մի խիստ յօդուած գրեց Ֆրանսիայի դէմ, որ շատ ծանր տպաւորութիւն թողեց Գերմանիայում, որովհետև այդ լրագիրը համարվում է գերմանական արտաքին գործերի մինիստրութեան կիսապաշտօնական օրգանը։

Յայտնի է, որ երբ Գերմանիան սկսեց վերջերս սպառազինվել, Ֆրանսիան էլ հետևեց նրա օրինակին, և նորերս ֆրանսիական պարլամենտը իր հաւանութիւնը տուեց ու նոր կրէդիտներ քուէարկեց նոր սպառազինումների համար։ Եւ ահա այդ առիթով ինչ է գրում յիշեալ գերմանական լրագիրը.

«Կառավարութեան համար դժուար չի լինի նոր օրէնքների անհրաժեշտութիւնը հիմնաւորել, եթէ նա պարզ և որոշակի ցոյց տայ, թէ որ կողմից է մեզ սպառնում վտանգը, որ կողմից ամենքը սպասում են այդ վտանգը։ Դա Ֆրանսիան է։ Սլաւօնութեան ուժեղացումը Բալկաններում, ի հարկէ, մեզ ձեռնտու չէ, որովհետև նա որոշ չափով կապում է Աւստրիային։ Նա առաջ կը բերէ մեր արևելեան սահմանակցի ուժեղացրած պաշտպանութիւնը։ Բայց բալկանեան դաշնակցութիւնը յաւիտենական շինութիւն չէ։ Եթէ նոյնիսկ ընդունենք, որ նա չի լուծվի, բալկանեան պետութիւնների ուժերը այնքան սպառված են ներկայ պատերազմով, որ իրանց հարկաւոր է երկար տարիներ հանգստութիւն՝ գրաւած երկիրները մարսելու համար։ Միւս կողմից՝ Ռումինիան առաջվայ նման գոյութիւն ունի, և, չը նայելով նրա ներքին շփոթութիւններին, չէ կարելի համարել նրան quantité négligeable, արհամարհելի քանակութիւն։ Հաշւի առնենք և այն, որ սլաւօնութեան դէմ յենարան կը լինի Աւստրիան, այլ ոչ մենք։ Մենք հակված չենք գնահատել նոր կարգի վտանգը Բալկաններում շատ սուր, բայց երբ պահանջում են զոհեր, պէտք է ցոյց տալ որոշակի, թէ որտեղ է մօտաւոր վտանգը։ Եւ դա Ֆրանսիան է։

«Երբէք մեր յարաբերութիւնները մեր արևմտեան դրացու հետ այնքան լարված չեն եղել. երբէք նա իր վրէժխնդրութեան մտադրութիւններն այնքան որոշակի չէ արտայայտել, ինչպէս այժմ։ Պարզ է, որ Ֆրանսիան պէտք ունի դաշնակցութեան Ռուսաստանի հետ, բարեկամութեան Անգլիայի հետ միայն նրա համար, որ նորից նուաճէ Էլզաս-Լօտարինգիան։ Ուստի, որտեղ և բռնկէ համաշխարհային հրդեհը, մեզ պէտք կը լինի խաչաձևել մեր սրերը Ֆրանսիայի հետ։ Թէ երբ կը պատահի այդ, ոչ ոքի յայտնի չէ, բայց ֆրանսիացիները, անկասկած, օգուտ կը քաղեն ամեն մի պատրուակից, որպէս զի դուրս գան Գերմանիայի դէմ, եթէ միայն նրանք ունենան որևէ յոյս յաղթութեան՝ Ռուսաստանի կամ Անգլիայի օգնութեամբ»։

Ցոյց տալով ապա ֆրանսիական լրագիրների ռազմական ագիտացիան վերջին օրերս և չը յիշելով այն մասին, թէ այդ ագիտացիան առաջ է եկել հէնց իրա Գերմանիայի նոր զինւորական ծրագիրներով, Թերթը շարունակում է.

«Մենք, անկասկած, պատերազմ կունենանք Ֆրանսիայի հետ, եթէ միայն մեր զօրքը յատկապէս ֆրանսիական զօրքից աւելի զօրեղ լինի։ Ուժեղացնել մեր զօրքը — այդ միակն է, որ մենք կարող ենք անել խաղաղութեան պահպանութեան համար. դեռ Բիսմարկն ասաց, թէ ֆրանսիացիները անմիջապէս կը սկսեն պատերազմ, հէնց որ նրանք որոշեն, թէ կարող են մեզ յաղթել։ Մի բան էլ պէտք է մենք ասենք. մենք պէտք է, չը ծածկելով, ցոյց տանք մեր զօրքի ուժեղացման պատճառները։ Մենք պարզ կերպով պէտք է մատնացոյց անենք այդ մուտքի վրա, որովհետև այդտեղ է խաղաղութեան թշնամին՝ Ֆրանսիա»։

Պէտք է ասել սակայն, որ միայն Գերմանիան և Ֆրանսիան չեն սպառազինվում։ Միւս պետութիւններն էլ կամաց-կամաց ստիպված են սպառազինվել։ Եւ յանուն խաղաղութեան պահպանութեան՝ պետութիւնները անդադար սպառազինվում են։ Սպառազինվում են նաև Անգլիան, Իտալիան, Աւստրիան, Ռուսաստանը. յետ չէ կանգնում և Ճապօնիան. շինվում են նորանոր ռազմական նաւեր, թնդանօթներ։ Միլիարդներ են ծախսվում սպառազինութիւնների վրա, մինչ նրանց մի տասներորդ մասը կարող էր միլիօնաւոր մարդկանց վիճակը բարւոքել։

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Թիւրքերը վերջնական յարձակման դիմեցին Չաթալջայում և Գալիպօլիում Կ. Պօլիսը փրկելու նպատակով։

◆ Պատերազմը շարունակելու վճռի հողի վրա Էնվէր-բէյը մենամարտի հրաւիրեց Ֆադըլ բէյին։ Մահմուդ-Շէվքէթը յայտնեց, որ մենամարտը կարող է տեղի ունենալ միմիայն պատերազմից յետոյ։

◆ Աւստրիական լրագիրների ասելով, սերբիական կառավարութիւնը նախագծել է հաստատել սերբ. ազգային պատրիարքարան Ուսկիւբում։

◆ Կ. Պօլսում երկիւղ են կրում, որ Ադրիանուպօլսի բերդապետ Շիւքրի-փաշան, յանձնելով բերդը, կը դիմէ մայրաքաղաք՝ Նազըմ-փաշայի մարդասպաններին պատժելու համար։ Այդ պատճառով Սան-Ստեֆանօյում կենտրոնացել են կոմիտէտին հաւատարիմ 23,000 զինւորներ։

◆ Բրինդիզիից Ալբանիա է մեկնել դուքս Մօնպանսիէն ալբանական Թագաւոր դառնալու նպատակով։

◆ Մայրաքաղաքի լրագիրների ասելով, Լէնայի դէպքերի առիթով յայտնի ռոտմիստր Տերշէնկովը «Էլդօրադօ» այգում մի երգչուհու հետ քէֆ անելիս ցինիկ կերպով խօսել է բանւորներին գնդակահարելու մանրամասնութիւնների մասին։ Այդտեղ ներկայ եղող իշխան Ն. Ե. Ն յուզված ռոտմիստրի պատմածից՝ թրով մի քանի վէրքեր է հասցրել նրան ձեռից։

◆ Լօնդօնի վեհաժողովը, ինչպէս տեղեկացնում են, որոշել է անմիջապէս պահանջել կռւող կողմերից դադարեցնել պատերազմը։

◆ Կ. Պօլսում խօլերան ընդարձակ չափեր է ընդունում։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

7 մարտի

ԽԱՐԲԻՆ։ Եանցզիֆուլում երևացել է խօլերայի նման վարակիչ հիւանդութիւն։ Մեռել են 30 մարդ։

ՊԻՐԷՑ։ Օդագնաց Պրիմավէզին ընկաւ 100 մետր բարձրութիւնից լիճը ու անհետացաւ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Դաւանաբանական մասնաժողովը ընդունեց այն օրինագիծը, որ օրինականացնում է պսակները, որ կատարել են ուղղափառ անձինք մինչև ապրիլի 17-ի հրամանը այլազգիների ծէսերով։

Ֆինանսական մասնաժողովը ընդունեց Սև-ծովի կովկասեան ափի մօտով հերթական նաւագնացութիւն հաստատող օրինագիծը։

Վեց ամսով երկարվում է արտակարգ պահպանութիւնը Եալտայում և նրա գաւառում։

Կարգադրիչ մասնաժողովը անհրաժեշտ գտաւ կառուցանել նոր շինութիւն Դումայի համար։ Առ այժմ վճռված է շտապով վերանորոգել Տաւրիկեան պալատը։

Նացիօնալիստների ֆրակցիան որոշեց պաշտպանել սահմանադիր-ռամկ. հարցապնդումը խուլիգանութեան դէմ կռւելու մասին հրատարակված պարտադիր որոշումների առիթով։

ՄՕՍԿՎԱ։ Մեկնեց Բուխարա բուխարական էմիրը։

ՏԻՐԱԺ

II փոխառ. խաղարկու տոմսերի

(Խաղացված մարտի 1-ին ս. թ.)

№№ սեր.	№№ տոմս.	Տարած գումար
14,453	46	200,000
15,437	3	75,000
13,851	32	40,000
17,678	47	25,000
3,356	34	10,000
12,069	38	10,000
7,672	14	10,000
12,402	40	8,000
4,983	36	8,000
274	1	8,000
16,004	23	8,000
19,950	7	8,000
11,267	43	5,000
5,853	25	5,000
10,577	24	5,000
19,288	2	5,000
15,036	46	5,000
4,576	12	5,000
3912	50	5,000
4,238	10	5,000
15,618	18	1,000
6,185	30	1,000
491	29	1,000
12,701	33	1,000
19,794	7	1,000
5,668	26	1,000
11,179	20	1,000
7,452	50	1,000
12,669	40	1,000
5,841	39	1,000
6,467	12	1,000
5,294	26	1,000
9,810	31	1,000
13,577	4	1,000
17,240	30	1,000
6.424	10	1,000
11,894	2	1,000
2,004	34	1,000
2,173	43	1,000
95	38	1,000

500-ական րուբլի տարած տոմսերը.

№№ սերիայի	№№ տոմս.	№№ սերիայի	№№ տոմս.	№№ սերիայի	№№ տոմս.
18103	29	9867	35	15135	45
15889	12	10810	35	17336	20
7862	34	11250	48	16621	10
8167	2	8371	50	6105	32
19554	32	8688	45	16667	20
11999	27	3746	5	17076	24
7512	37	7628	35	11915	12
3168	5	18905	50	16582	49
16249	16	15821	23	5847	38
11883	24	12348	33	19920	35
963	41	16323	33	4889	47
4306	16	8985	36	18622	3
625	22	6237	15	10607	15
19548	10	19377	10	7571	36
6527	34	8566	43	1302	33
9972	26	16700	44	9584	6
17832	29	343	46	19550	41
7993	38	2987	25	4508	42
11749	24	15323	29	7716	20
10892	23	4238	46	18920	43
14618	34	10598	3	1375	17
3535	20	11170	9	15203	3
17516	37	13321	12	4638	31
19458	45	14265	7	14084	1
16908	48	12931	22	4164	41
13855	10	7105	27	3035	28
1894	4	736	47	738	30
13343	26	13207	6	9877	10
3404	43	14192	18	13569	29
17714	14	2703	44	12457	46
359	2	4613	33	11069	8
8461	37	2876	32	16570	40
2920	5	19653	42	4898	26
15265	42	11265	15	6950	17
10656	15	19394	37	15763	50
8195	30	6054	14	14648	8
4258	28	1075	39	3971	2
3841	50	13695	18	15634	6
5870	32	18368	16	9510	45
11642	31	14986	14	14753	19
4213	12	14553	50	19195	44
5816	15	19482	49	2222	12
7423	49	5276	17	9431	31
65	4	19413	43	7756	19
2156	44	12025	4	2863	48
13605	41	15287	43	7117	24
9877	28	14902	42	7774	31
4294	13	14162	45	7004	7
15345	33	3314	20	1596	49
13402	8	11350	17	4485	8
3394	13	16966	41	4287	46
830	1	12203	41	881	35
18340	34	8457	5	4523	10
16030	12	13543	5	13489	48
9437	48	2022	2	7381	12
14629	12	4712	35	19388	30
6509	45	17715	14	1442	23
19012	43	6188	30	2585	40
11078	41	1259	41	7777	37
17159	16	17355	6	12624	3
17034	40	15058	4	4303	47
10703	31	11595	46	15436	24
14055	6	10713	49	8926	31
5197	20	15080	12	14482	41
4361	25	7350	17	9215	24
7924	49	5736	14	8420	46
15781	41	5987	39	16246	28
19183	29	5998	20	2750	13
16340	17	3024	22	11886	30
7893	48	14236	23	8463	16
11638	3	13997	27	17781	29
18548	27	2668	2	869	9
8443	15	1461	44	8880	32
6316	18	2881	40	4532	32
17967	44	10205	38	3991	46
11308	30	7041	13	18846	35
1166	10	19341	35	14686	32
11983	14	10265	21	15603	2
3952	14	8450	43	17114	49
16727	41	19908	1	9632	9
13234	31	14591	38	9894	35
4525	47	984	14	15111	8
12618	44	15584	21	1358	45
15918	47	8369	44	17416	14
10331	41	6204	34	9405	15
9561	31	2647	23	9274	37
9922	3	11820	50.		

ՀԱՆԳԱՄ ՏՈՄՍԵՐ

7066, 10733, 14319, 16769, 1639, 4716,
118, 6838, 13451, 10031, 9907, 16865,
6222, 9351, 17587, 10662, 12113, 19999,
16094, 8332, 9363, 19636, 5903,
3388, 532, 14583, 5134, 19625, 5201,
7517, 3286, 1194, 9810, 7258, 15524,
15098, 6705, 10317, 12425, 4860, 4076,
7481, 249, 9679, 7787, 3114, 4118,
19900, 13261, 6300, 1866, 2660, 9730,
8123, 9670, 19809, 6905, 3387, 15660,
13924, 18625, 414, 8438, 7648, 14843,
4304, 13063, 4964, 8954, 9622, 10773,
7251, 17434, 7749, 18628, 12216, 5283,
13661, 2181, 15978, 4373, 676, 17852,
13963, 12364, 596, 1930, 1993, 19053,
10241, 13348, 12220, 9964, 14090, 16331,
11760, 14683, 6434, 13936, 8941, 5301,
12417, 6959, 13143, 6783, 18210, 12156,
8609, 6461, 9060, 510, 18797, 15698,
346, 6340, 7970, 14586, 8755, 2195,
16421, 4039, 6835, 690, 16153, 6249,
11666, 19778, 9168, 9267, 11676, 16445,
2425, 6484, 16697, 11214, 10477, 4666,
68, 5898, 14657, 7909, 17192, 4484,
10176, 4804, 10788, 11035, 17602,
13810, 3227, 19592, 8699, 13909, 12778,
14014, 7743, 4195, 5265, 10104, 1304,
3103, 7396, 4782, 9581, 19536, 8256,
8159, 1201, 10152, 15097, 18986, 10869,
10141, 12157, 4155, 15546, 9270, 8117,
8415, 17520, 13858, 16905, 15531,
14592, 1235, 16507, 1728, 155, 18636,
14798, 17048, 339, 18797, 10734, 17280,
763, 1358, 14500, 9742, 17714, 6438,
5179, 4788, 12910, 12549, 1998,
10111, 18012, 9215, 18814, 8333,
11209, 8705, 3203, 14795, 18083,
19087, 13659, 6388, 11267, 5572,
9047, 15960, 12668, 18557, 3144.

ՊԵՏԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԹԻՖԼԻՍԻ ՃԻՒՂԸ

Արժեթղթերի կուրսերը

8 մարտի

I կ. ներք. փոխ. խ. տոմս.	458 ռ.
II » » »	354 ռ.
III Ազնուակ. բանկ. »	335 ռ.
4% Պետական ռենտա	93 ռ.
5% Արտաք. փոխառ. 1906 թ.	103 ռ.
5% Ներքին » 1905 » I հրատ.	104 ռ.
5% » » II հրատ.	104 ռ.
5% Պետ. Ազնւ. բանկ. գր. թ.	101 ռ.
4½ » » » »	91 ռ.
4% » » » »	89 ռ.
3½% » » » »	84 ռ.
5% Գիւղ. հող. բան. վկ.	101 ռ.
4½% » » » »	91 ռ.
4% » » » »	91 ռ.
5% Արտաք. փոխառ. 1908 թ.	104 ռ.

Օտարերկրեայ դրամների կուրս

Լօնդօն 10 ֆ. ստեր.	95 ռ.
Բերլին 100 մարկ	46 ռ.
Պարիզ 100 ֆրանկ	37 ռ.
Թաւրիզ 10 ղռան	— ռ.
Կ. Պօլիս 1 լիրա	— ռ.

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆ
Ե. ՏԷՐ ՄԱՐԿՈՍ
Հ. ԱՌԱՔԵԼ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵ

Высочайше Утвержденное Русское Об
Пароходства и Торговли, учрежд. въ 18
ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԻ
ՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ.
Ձմերային երթևեկութիւն
ՂՐԻՄ-ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԻԾ
Մեկնում են Բաթումից
I Պօստային-մարդատար շոգենաւեր.
Երեքշաբթի ժամի 1-ին գիշերը, շրջանակի
Հինգշաբթի » 1 »
Շաբաթ » 12 »
II Մարդատար շոգենաւեր.
Երկուշաբթի ժամի 2-ին ցերեկը, շրջանակի
Շաբաթ » 2 »
III Մարդատար-ապրանքակիր շոգենաւ
Երեքշաբթի կէս գիշերին, շրջանակի
Ուրբաթ » »
Ժամերը Պետերբուրգի են։
ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՓՕՍՏԱՅԻ
Կանոնաւոր հաղորդակցութիւն դէպի Ալեքսան
բիօլթեազայի, Մակեդօնիայի, Սերբիայի,
Պարսից-Ծոցի (Персидскiй заливъ) գծերի
նաւահանգիստները։
ԲԱԼՏԻԱԿԱՆ ԳԻԾ
Կանոնաւոր հաղորդակցութիւն ուղղակի Պետեր
Ռիգա, Լիբավա և Րէվել։
Տոմսակները կարելի է գնել Թիֆլիսի գրասենեա
Սօլօլակսկայա փողոց, № 8.
Հեռախօս № 11.
Ընդունվում են եւ ապահովագրվում
ապրանքներ ձեռնտու պայմաններով
Գործակալ՝ Ս. Խ. Սուլխանեա

ՀՕՆՕՐՐԷԻ (ՏՐԻՊՊԵՐ) ԴԷՄ
ՆՈՐ-ՄԻՋՈՑ
„SALO—ՊԻՉԻԼԻՆ"
Ներգործում է արագ և արմատականապէս
բժիշկների վկայութեամբ համարվում է
տատուն միջոց։ Գործադրելու ձեռնարկը կց
է արկղիկին։ Իսկականը մետաղեայ արկղիկներ
Գինը՝ 1 ռ. և 1 ռ. 80 կ.։
Միաժամանակ լաւ է ներգործում բէլ
եւ բէ յարատեւ բնոյթ ունեցող դէպքեր
եւ կարճ ժամանակի ընթացքում վեր
նում է ամենայամառ ընթացք
ՊԱՀԵՍՏ՝ Петербургъ, Разъѣзжая ул.,
аптека В. Конгейма.
Ուղարկվում է վերադիր վճարով։ Ճանապա
ծախքը պօստային սակագնով։
Գտնվում է Կովկասեան Ընկերութեան Դ
Ապրանքների վաճառանոցում։

ՍԱՊՕՆ
ՊԱՏԱՆԵԿՈՒԹԻՒՆ
Т-во С. И. ЧЕПЕЛЕВЕЦКIЙ съ С-ми. Москва.
(М. 98542) 7—1

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ընկերութեան Խմբագրական Մասնաժողովի խմբագրութեամբ և Ընկերութեան հրա
րակութեամբ ԼՈՅՍ ՏԵՍՆՈՂ
„ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ"
ներկայ 1913 թւին կը հրատարակվի ամիսը մէկ անգամ։
Մատենադարանը կը պարունակի ինքնուրոյն և Թարգմանական գրուածքներ
ծրագրով. 1) Վէպեր, վէպիկներ, պատմուածքներ և գեղարուեստական ուրի
ռուածքներ։ 2) Թատերական գրուածքներ։ 3) Երգիծաբանական երկեր։ 4)
այլք։ 5) Ցայտարարութիւններ։ Իւրաքանչիւր համարը բաղկացած կը լինի
96 երեսից Ընկերութեան հրատարակութիւնների դիրքով եւ կը ներկայաց
ամբողջութիւն։
Տարեկան 12 համարի բաժնեգինն է ճանապարհի ծախքով՝ Ռուսաստան 1 ռ. 80
արտասահման 5½ ֆրանկ։
◆— Առանձին բաժանորդագրութիւն չէ ընդունվում։ —◆
Բաժանորդ կարելի է գրվել՝ Թիֆլիսում Ընկերութեան գրասենեակում, Бебутовская,
և բոլոր հայ գրավաճառանոցներում։ Գաւառներում՝ Ընկերութեան ճիւղերի, աշխա
կից անդամների, գործակալների և տեղական գրավաճառների մօտ։
Ծանօթ.—Լոյս տեսաւ և ուղարկվեց բոլոր բաժանորդներին «Հանրային Մա
դարանի» № 13-ը՝ Լորդ Բայրոնի «Մանֆրէդ» գիրքը, անգլիերէնից
Տիրայր վարդապետ։
(կ.ե.հ.ը.) 166. 5—5

ՄՕՍԿՎԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԳԵՑԻԿ ԽՄԲԻ ԸՆԿԵՐՈՒԹԵ
համար հարկաւոր է ՄԻ ՍՕԼԻՍՏ ԵՐԳԻՉ (ցանկալի է լիրիքական կամ բա
նաւոր տենոր)։ Գերադասութիւն է
վելու այնպիսիներին, որոնք վճարել են նուիրվել երգչական կամ երաժշտական
նէութեան։ Պայմանների մասին դիմել Ե. Բաղդասարեանին. Москва, Лазаревскiй
тутъ Восточныхъ Языковъ.
Գործավար խմբի՝ Ռ. Շեխեան
(օ. մ.) 175. 3—3

Типографiя канцелярiи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный